№ 26 ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4 № 26

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտահար Ալմաս Հախնազարեանցը, Նինա Վարժանեանցը, Սօֆիա, Յարութիւն, Մարիամ, Արուսեակ Հախնազարեանցները ցաւօք սրտի յայտնում են, առաջինը իր թանկագին դստերը, երկրորդը և վերջինները իրանց անմոռանալի քրոջ՝

Շուշանիկ Հախնազարեանցի

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 1-ին։ Ամբիծքը, շաբաթ, երեկոյեան ժամը 4-ին, իսկ թաղումը փետրվարի 4-ին, Մուղնու ս. Գ. եկեղեցին, իր տնից, Панасевича ул. № 18, դէպի Խօջիվանքի գերեզմանատունը։ առ. 3—3

Եկատերինա Եգօրեան Բասինեանը իր որդկերանցով, Մարիամ Պետրոսեան և Եգօր Իվանովիչ Ղօնդախսազեանները ցաւօք սրտի յայտնում են՝ առաջինը իր սիրելի ամուսնու, երկրորդներն իրանց թանգագին հօր և վերջինները փեսայի՝

Գէորգի Անտոնեան Բասինեանի

մահը, որը տեղի ունեցաւ փետրվարի 1-ին։ Ամբիծքը երկուշաբթի, փետրվարի 5-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը երեքշաբթի, փետրվարի 6-ին, առաւօտեան 10 ժամին իր բնակարանից (Աւճալեան փող. Եազօնօվսկի պերեուլ. № 4) դէպի Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Բացուած է բաժանորդագրութիւն
և մինչև փետրվարի 12—14 լոյս կը տեսնէ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ

որ արդէն մամուլի տակ է։ Թերթիս աշխատակցելու են տ. Սիրանոյշ, պ.պ. Ահարոնեան Աւ., Բարայեան Լևոն, Բաշինջաղեան Գ., Երիցեան Գարեգին, Թումանեանց Յով., Թորամանեան Թորոս (ճարտարապետ), Լէօ, Memento Mori, Շանթ, Փափազեան Վրթ., Բափանակեան Ստ., Տէր-Աստուածատրեան Գ., Նար-Դոս, Վրոյր և ուրիշներ։ Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել գաւառական բեմերի զարգացման։ Այս տարի տալու է 18 համար 100-ից աւելի պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնց առանց դժուարութեան ամեն տեղ կարելի է ներկայացնել։ Տարեկան բաժնեգինն է 5 ր., արտասահման 6 ր. կամ 3 դոլլար։ Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քեօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեվսկայա № 3, ուր դիմելու են օտարաքաղաքացիք։

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

առ. 2—5

1907 Թ.

„ՆՈՐ-ԱՇԽԱՏԱՆՔ“

ժողովրդական-հասարակական-տնտեսական

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Նոր-Աշխատանքը» նուիրուած է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրօլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը։

«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը։

«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ ինտելիգենցիան։

«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-գիրք նուիրուած գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին։

ԲԱԺՆԵԳԻՆԸ

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին	4 ր.	Տարին	18 ֆր.
Կէս տարին	2 ր. 50 կ.	Կէս տարին	10 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовская № 50.

2—3 ա. Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբօմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.։ Կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէճեան

(հ. կ.) առ. 2—5

ԵՂԲ. ՍԱՓԱՐԵԱՆՑՆԵՐԻ ԵՒ Ց ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻ

պատրաստի հագուստների Պարիժակի խանութում,

որ գտնվում է Գօլօվինսկի պրօսպեկտի վրա

առաջին ԳԻՄՆԱԶԻԱՅԻ հանդէպ,

ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌՔ

Յունվարի 22-ից ՄԻՆՉԵՒ փետրվարի 10-ը՝

Գինը ֆաբրիկային են եւ կապոյտ մատիտով նշանակված։

Հեռախօս № 258

(21, 25, 28, 4, 8) ա. 4—5

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

„ՄՈՒՐՃ“

Գրական, հասարակական և քաղաքական

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ.։ Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական 3 ֆ։

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.). երկրորդ վճարը լինում մայիսին։ Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախան. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գօլօվինսկի պրօսպ. Թատր. դիմաց)։

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ»։

Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ր., $1/2$ եր. 5 ր., $1/4$ եր. 2 ր., տողատեղ (կորպուս) 40 կ.։

4—0 Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գրական, բաղաքական, հասարակական շաբաթաթերթ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	4 ր. —	2 ր. 25 կ.
Գաւառ	4 ր. 50 կ.	2 ր. 50 կ.
Ամերիկա	3 դոլ.	1,75 դոլ.
Արտասահման	15 ֆր.	8 ֆր.
Պարսկաստան	5 ր. 50 կ.	3 ր.։

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։

ՄԱՍՆԱԳԷՏ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՌՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ՆԱՆՉԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բղի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բղի և ականջի, երկ. չրեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Դ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիւնօզով ամենայն 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ. չրեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ }

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԴԵՑՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԽԱ. ՊԻԻԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Դ. ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստամոքսների և ծառանների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 59—144

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, յունվարի 22-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

Մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

Տիկին ՄԵԼԻՔԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

ՕՐԼԷԱՆԻ ԿՈՅՍԸ

Ողբերգութիւն 5 արար., Շիլլերի, Թարգմ. Գ. Բարխուդարեանի

Մասնակցում են՝ տ. տ. Մելիքեան, Նոնիկեան, Սիրանոյշ, Օհանեան, Փառանձեմ, պ. պ. Աբէլեան, Ագելխանեան, Ազաբէգեան, Ալղայեան, Արաքսեան, Աւետեան, Զարիֆեան, Թաշճեան, Մանուէլեան, Յարութիւնեան, Ռշտունի և ուրիշները

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Տեղերի գները բենեֆիսի են

Վարչութեան հերթապահ անդամ՝

Յ. Ղօրղանեան

Ռեժիսեօր Յ. Աբէլեան

առ. 2—2

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

քթի, կոկորդի եւ ականջի

հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի
երեկ. 5—7 ժ. ցի ուրբաթ

Միխայլօվսկի պրօսպ., տ. Ֆօրբերի № 11.

(կ. չ.) առ. 20—60

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն։

Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ։

Մ. Պ. ՆԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.։

Պ. Ա. ԲԷՑԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.։

Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն։

Հիւանդանոցում բժշկումն հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօրութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն։

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան։ Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմերներից։

առ. ե. հ. կ. 20—100

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ալէքսանդրօ-Նեվսկի եկեղեցուն կից.

Միքայէլեան փող. № 139, տէլէֆօն № 817.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից։

Բժ. Ա. Դ. ԳՈՒՐԿՕ—Ներքին հիւանդութ. երեքշաբթի և հինգ. օրերը, ցեր. 11—12 ժամը։

Տ. Ի. ՌՈՒԴԷՆԿՕ—Ներքին հիւանդութ. շաբաթ օրերը 12—1 ժամը։

Ս. Ս. ՎԻՐՍԱԼԱՁԷ—Ներքին հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ։

ՕՐԲԵԼԻ—Ջղային հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ օրերը, 12—1 ժամը։

Ի. Ն. ՏՈՒՄԱՆՕՎ—Կանացի հիւանդութ. երեքշաբթի և ուրբաթ 11—12 ժամը։

Մ. Պ. ՆԻՄՕՆՏ—Վիրաբուժական [illegible]

Ս. Ա. ՌՕԶԱՆՕՎ.—Քթի, ականջի և բկի հիւանդութիւններ, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11—12 ժ.։

Հիւանդանոցի կառավար. բժ. Ա. Ս. ԱԼԱԴՕՎ ներքին հիւանդութ. ամեն օր 10—11 ժամը։

(կ.) առ. 10—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ԸՆԿԵՐ“

Շաբաթաթերթի № 2-ը հետեւեալ բովանդակութեամբ.

1. Վերաստեղծութեան տարկան, 2. Թիֆլիսի ընտրութիւններ, 3. Մի ծանր ողբերգութիւն, 4. «Ընկեր»—Արտագ, 5. «Ընկերը»—Գ. Բաշինջաղեան, 6. Հայր Սուրբը—Սափրէն, 7. Արուեստագէտներ—Շիլլերից, 8. Րընան—Յիսուսի կեանքը, 9. Սիրանուշի Համլետը, 10. Ի՞նչ է «Էստետիկը», 11. Մըտաւոր գանձեր, 12. Գիտութեան զարգացումը, 13. Թիֆլիսի նկուղները, 14. Այլասերումը կաղզուանում։

Տարեկան՝ 5 րուբլի. կարելի է վճարել մաս-մաս։ Հատով չէ ծախվում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «ИНКЕРЪ»

առ. 1—1

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՉԵՉ

(искуственная вощина)

Պատրաստում եմ ձեռնտու գնով, փետրվար և մարտ ամիսներում

Հասցէս Сел. Бол. Караклисъ Аветису Агабабянцъ,

առ. օր. մ. 7—15

Կիրակի, փետրվարի 4-ին

Արտիստական ընկ. դահլիճում

Հայուհեաց Որբախնամ

Ընկերութեան վարչութիւնը

ՏԱԼԻՍ Է

ԵՐԵԿՈՅԹ

Որբանոցի բացման առիթով սկզբնական ծախսերը հոգալու համար։

Երեկոյթի ծրագիրն է հետևեալը.

I. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱՍ

Բարեհաճ մասնակցութեամբ տիկին Վալոյի Բալբաշեվսկի, Նեզվիցկիի և պ. պ. Մօդեստովի, Աբէլեանի, Արաքսեանի, Ազամեաղէի, Դօլուխանեանի և Ծովեանի։

II. ԲՆՈՐՈՇ ՊԱՐԵՐ (զգեստներով)

Ш. ՎԻՃԱԿԱԽԱՂ դիմակահանդէս և պարահանդէս։

Դիմակաւորվել կարելի է գիշերվայ ժամի 12-ից յետոյ, Արտիստական ընկ. առանձնասենեակում։ Ցանկացողներին կը տրվեն վարձով զգեստներ և դիմակներ։

Սկիզբը $8^1/_2$ ժամին երեկոյեան։

Տոմսակները վաճառվում են Սուղանաճեանցի երաժշտական մագազինում (Երևանեան հրապ.), Ռեվերի ծաղիկների մագազինում (Գօլօվինսկի պր.), երեկոյթի օրը թատրօնի կասսայում։

(Ե. ու. կ.) 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սարդերի ոստացնում, Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Մամուլ. Գանձակում. Դատաստանական դահլիճից. Իմ պատասխանը Վ. Սէրտի. Ցետաքեաց ժողովուրդ, Մի ուրախալի երևոյթ. Թուանշանների իսկական իմաստ. Վերակազմեալ հնչակեաններ. Դէպուտատներ. Հասարակութեան դատաստանին. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՍԱՐԴԵՐԻ ՈՍՏԱՑՆՈՒՄ

I

Մենք նորից մատը դնում ենք մի հին խոցի վրա, որ այնքան մեծ վնասներ է տուել մեր ժողովրդին։

Դա կեղեքումների և վաշխառութեան բազմացած դէպքերի երևան գալն է։

Մեր ժողովրդական կեանքի ներկայ թշուառ և տանջալի վիճակում կեղեքումները և վաշխառութիւնները ոչ միայն չեն զսպվել և ընկճվել, այլ ընդհակառակը ստացել են նորանոր ձևեր և ամենազզուելի արտայայտութիւններ։

Նոյնիսկ յանցագործները որոշ ծանր րօպէներում և սրբազան դէպքերում զգաստանում են, սթափվում և թէկուզ ժամանակաւորապէս մաքրվում։ Եւ անշուշտ կարելի էր կարծել, որ մեր ժողովրդի ներկայ տագնապալից և սգաւոր օրերում ժողովրդական սարդերը և տզրուկները կը խնայէին իրանց զոհերին և չէին հասցնի նրանց մինչև թշուառութեան և ստորացման վերջին աստիճանը։

Բայց այդպէս չեն իրականութեան փաստերը։

Մեզ զանազան տեղերից հաղորդում են տեղեկութիւններ բազմացած կեղե[illegible] մասին, որոնք [illegible]

II

Տարիներ շարունակ մենք անխնայ կռիւ ենք մղել այն հարստահարութիւնների դէմ, որոնք տեղի են ունեցել մեր երկրում։

Մենք տուել ենք բազմաթիւ յօդուածներ հարստահարութեան արտայայտութիւնների դէմ և նոյնիսկ յանձն ենք առել դատաստանական պատասխանատուութիւններ՝ մաքառելու կեղեքողների և վաշխառուների դէմ։

Մեր ընթերցող հասարակութիւնը շատ լաւ կը յիշէ այն դոռ արշաւանքը, որ «Մշակը» իր թղթակիցների միջոցով յարուցել էր Ախալքալաքի գաւառի հարստահարողների դէմ, և այն դժոխային զայրացկոտ դիմադրութիւնը, որ հանդէս բերին հարստահարողները մեր և մեր թղթակիցների դէմ, դիմելով թէ դատարանին, թէ ոստիկանութեանը և թէ ժանդարմերիային, որպէսզի ապարէզից հեռացրած լինէին այն բոլոր անձերին, որոնք խանգարում են նրանց գործունէութիւնը։

Ախալքալաքի գաւառի դէպքերը մեր անցեալ իրականութեան սևագոյն էջերից մէկն են կազմում, բայց միևնոյն ժամանակ և հայ գրական հրապարակախօսութեան հերոսական էջերից մէկը։

III

Այժմ կեղեքողը և հարստահարողը հանդէս են եկել նորանոր ձևերով և նուաճել նոր շրջաններ։

Նրանք յայտնվել են և գիւղական համայնքի գործունէութեան մէջ, և ինքնապաշտպանութեան գործում, և զանազան մասնաժողովներում—ամեն տեղ, ուր կարելի է ցանցեր գցել զոհեր որսալու համար։

Ոչ ժողովրդի թշուառութիւնը, ոչ քայքայված ու աւերված տնտեսութիւնները, ոչ հարիւրաւորների ու հազարաւորների արտասուքները չեն զսպում հարստահարողներին։ Եւ մենք տեսնում ենք սարդերի ու տզրուկների գործունէութեան սարսափելի հետևանքները մեր երկրի զանազան կողմերում։

Չէ կանգնեցնում կեղեքողին և այն նախազգուշացնող սպառնալիքը, որ բերում է իր հետ ազատագրական շարժումը։

Եւ մեր թշուառացած ժողովրդի զանազան խաւերում գործվում են հարստահարութեան նորանոր ցանցեր ու հանգոյցներ, որոնք պէտք է սեղմեն շատ-շատերին երկար տարիներով։

Խեղճացած ու ընկճված ժողովուրդը ակամայ գցում է իրան այդ ցանցերի ու հանգոյցների մէջ, որովհետև նա անելանելի դրութեան մէջ է ընկել. նա յուսահատվել է։

IV

Ժողովրդական տանջանքի ձայնը աղիողորմ հնչիւններով գալիս է գիւղական խորքերից և օգնութիւն է խնդրում մեզնից։

Քաղցը, մերկութիւնը, կարիքը, հացի և սերմացուի պակասութիւնը ստիպել են ժողովրդին համաձայնվել ամեն տեսակ պայմանների իրանց ամենաանհրաժեշտ պահանջների բաւարարութիւն տալու համար:

Չնչին գներով ծախվել են տան իրերը, լծկան եզները, հունձի որոշ մասերը և պարտքեր են արվել ամենասոսկալի պայմաններով:

Ժողովրդական թշուառութիւնը ոչ թէ չէ կանգնեցրել հարստահարողին, այլ աւելի ևս հեշտացրել է նրա քայքայիչ գործունէութիւնը:

Ժողովրդի բարեկամներ, օգնութեան հասէք թշուառացած ազգաբնակութեան և ձեր նպաստներով ու մի շարք ձեռնարկութիւններով աջակից եղէք ժողովրդին թօթափելու իրանից այն շղթաները, որոնք փաթթվում են ժողովրդի մարմնին:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒ, 1 փետրվարի.—«Каспій» լրագիրը «Լօկաուտ Բագւում» խորագրով մի յօդուած է տպել, որով խիստ քննադատութեան է ենթարկում Պետերբուրգի հեռագրական գործակալութեան՝ հայկական նաւթային ֆիրմաներում տեղի ունեցող գործադուլների մասին տուած հեռագիրը, մանաւանդ որ այդ հեռագրով նպատակ կայ բանւորական հարցը դնել ազգային հողի վրա: Փաստեր չը բերելով հանդերձ, լրագիրը սխալ է համարում թղթակցի այն ցուցմունքը, թէ «Դաշնակցութիւնը» գործադուլը յայտարարել է իբրև ընտրողական մանեօվր: Դժբաղդաբար, գործադուլի այդ բնաւորութիւնը հաստատվում է 1) հէնց իր, գործադուլով, գլխաւորապէս հայկական ֆիրմաներում, 2) «Դաշնակցութեան» պաշտօնական օրգան «Ժամանակ» լրագրի տեղեկութիւնով, թէ Միրզօեւների մօտ գործադուլ է յայտարարված, 3) հայ առաջադիմականների «Մշակ» լրագրում, յունվարի 28-ին զետեղված հեռագրով թէ գործադուլը շարունակվում է գլխաւորապէս հայկական ֆիրմաներում և որ վերջինները բանակցութիւններ են վարում՝ տալու իրանց ձեռնարկութիւնները կապալով ոչ հայկական ֆիրմաների, 4) հայ գործադուլականների թռուցիկով, որով դիմում է լինում գործաթող հայ բանւորներին՝ խնդրելով դադարեցնել գործադուլը:

(«Հ. Գ.»)

Կ. Պոլիս, 2 փետրվարի.—Նոր-Շուկայում սկսվեցին անկարգութիւններ, որոնք առաջ եկան սուրբերը հաւաքելու ժամանակ ծագած տարաձայնութիւններից, որ յաճախ են կրկնվում վերջին տարիներս: Առևտրական շուկան փակված է:

(«Հ. Գ.»)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Նահանգական ընտրողական վարչութիւնը հաստատել է Թիֆլիս քաղաքի բոլոր քաղաքամասերի ընտրութիւնները:

Ռուսաց սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան ընդհանուր քաղաքային կոնֆերենցիան Պետական Դումայի անդամ Թիֆլիս քաղաքի կողմից մատնանշել է Արշակ Գերասիմովիչ Զօհրաբեանին:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 փետրվարի: Սենատը գտաւ, որ կուսակրօնները կարող են մասնակցել ընտրութիւններին, եթէ բաւարարութիւն են տալիս ընտրողական ցենզի ընդհանուր պայմաններին:

Սարատովում ընտրված 80 պատուիրակներից 65-ը պատկանում են ձախակողմեան բլոկին, իսկ 15-ը սահմանադիր-ռամկավարներ են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի: Պատուիրակների ընտրութիւնները, Մինչև փետրվարի, 1-ը ընտրված 5699 պատուիրակներից 1369-ը՝ միապետականներ են, 870-ը չափաւորականներ, 2382-ը՝ ձախակողմեաններ, որոնցից խաղաղ վերանորոգչականներ—71 հոգի, սահմանադիր-ռամկավարներ—604 հոգի, սրանց կողմնակիցներ—157 հոգի, գիւղացիական դաշնակցութիւնից—4 հոգի, սօցիալ-դեմօկրատներ—273 հոգի, սօցիալիստ-յեղափոխականներ—57 հոգի. 458-ը՝ ազգային կուսակցութիւններից, 381-ը՝ անկուսակցականներ, 239-ը՝ յայտնի չէ թէ որ կուսակցութեանն են պատկանում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի: Մինչև փետրվարի 2-ը շրջանների, գիւղերի, ստանիցաների, հողատէրերի, քաղաքային ընտրողների և բանւորների լիազօրների համագումարներին ընտրված 5778 պատուիրակներից 1382-ը՝ միապետականներ են, 811-ը՝ չափաւորականներ, 42%-ը՝ ձախակողմեաններ, որոնցից 620-ը՝ կադէտներ են, 159-ը՝ նոյնպէս սրանց կողմնակիցներ, 278 հոգին սօցիալ-դեմօկրատներ, 461 հոգին պատկանում են զանազան ազգային կուսակցութիւնների, 384 հոգին անկուսակցականներ են, 241 հոգին յայտնի չէ թէ որ կուսակցութեանն են պատկանում:

Սենատը գտաւ, որ տպարանի սրբագրիչները կարող են մասնակցել բանւորական ընտրութիւններին:

ՍԱՄԱՐԱ, 2 փետրվարի: Համաձայնութիւն կայացաւ սահմանադիր-ռամկավարների և սօցիալ-յեղափոխականների միջև: Նահանգական ընտրութիւնների ժամանակ կադէտները ստանում են 4, իսկ սօցիալ-յեղափոխականները՝ 3 տեղ:

ՎՈՐՈՆԵԺ, 2 փետրվարի: Ընդդիմադիր կուսակցութիւնների բլոկը գիւղացիներին տալիս է 7, սահմանադիր-ռամկավարներին՝ 2 և սօցիալ-յեղափոխականներին՝ մէկ տեղ:

ՄԱՄՈՒԼ

Ֆրանսիական պատգամաւորների պալատի յունվարի 25-ի և 26-ի նիստերում տեղի ունեցած հակաճառութիւնների մասին խօսելով «Россія» պաշտօնական լրագիրը ասում է.

Ֆրանսիական սօցիալիստների սարքած տեսարանները ոչ այլ ինչ էին, բայց եթէ կրկնութիւնն այն տեսարանների, որ վերջին տարիներս յաճախակի ցոյց էին տալիս այդ կուսակցութեան ներկայացուցիչները: Իհարկէ բոլորովին զուր կը լինէր սպասել այդ կուսակցութիւնից անաչառ և արդար վերաբերմունք Ռուսաստանի վերաբերմամբ: Դէպի ռուսաց կառավարութիւնն ունեցած ատելութիւնից կուրացած կուսակցութիւնը իր այդ զգացմունքները թափում է ամբողջ ռուս պետութեան և ամբողջ ռուս ժողովրդի վրա: Ֆրանսիական սօցիալիզմի այդ քաղաքականութեան վրա կարելի էր ուշադրութիւն չը դարձնել, եթէ որ ներկայ դէպքում շօշափված չը լինէին ֆրանս-ռուսական դաշնակցութեան կարևոր շահերը: Ոչ միայն Ֆրանսիայում, այլ և ուրիշ երկրներում սօցիալիստների քաղաքականութիւնը միշտ էլ ունեցել է մի էական թերութիւն. նա եղել է հակազգային: Ֆրանսիայում սօցիալիզմի այդ յատկութիւնը երևան է գալիս աւելի խիստ կերպով, որովհետև այնտեղ սօցիալիստական կուսակցութիւնը բոլորովին հակառակ է եղել և հակառակ է ժողովրդի քաղաքական ձգտումներին: Այդպէս էր Մարօքքօյի կոնֆլիկտի ժամանակ, նոյնը կատարվում է այժմ ռուս-ֆրանսիական դաշնակցութեան վերաբերմամբ: Սօցիալիստները իւրաքանչիւր յարմար դէպքում աշխատում են թելադրել երկրին իրանց կամքը, որ ամենևին չէ համապատասխանում ժողովրդի շահերին և կառավարութեան քաղաքականութեանը: Ի՞նչ արդիւնք է ստացվում այդ տեսակ քաղաքականութիւնից: Աւելի է ամրապնդվում ֆրանս-ռուսական դաշնակցութեան ապագան, իբրև քաղաքական մի կօմբինացիա, որ թելադրված է ոչ միայն երկու ազգերի զգացմունքներով, այլ և երկու պետութիւնների փոխադարձ շահերով: Ֆրանս-ռուսական ժողովրդական և պետական դաշնակցութիւնը կնքված էր այն ժամանակ, երբ Ֆրանսիայի և Ռուսաստանի քաղաքական կազմերի մէջ ոչ մի ընդհանուր բան չը կար: Ռուսաստանի վերջին տարիների անցքերը մի փոքր փոփոխութեան ենթարկեցին այդ նախկին տարբերութիւնները, այնուամենայնիւ երկու պետութիւնների քաղաքական դաշնակցութեան համար ներքին գործերը սկզբունքային նշանակութիւն չունեն, որովհետև երկու պետութիւններն էլ բոլորովին անկախ են իրարից: Այդ տեսակէտից ֆրանսիական սօցիալիստների ցանկութիւնը միջամտելու Ռուսաստանի ներքին գործերին իբր թէ ռուսաց արժեթղթեր պահող ֆրանսիացիների շահերը հոգալու պատրուակով զուրկ է որևէ հիմքից, բայց նրանց փորձունքը Ռուսաստանի դէմ և ձգտումը զցել նրա դրամական վարկը, վկայում է մի կողմից սօցիալիստների քաղաքականութեան չափազանց միակողմանիութիւնը, միւս կողմից հաստատում են ֆրանսիական հասարակական կարծիքին անընդհատ հոգալ պահպանելու այն քաղաքական թանկագին բարիքը, որ ֆրանսիական ազգը ստացել է Ռուսաստանի դաշնակցութեամբ: Բարոյական գոհունակութեան լիակատար զգացմունքով հարկաւոր է խոստովանել, որ ինչպէս ֆրանսիական մինիստրների յայտարարութիւնը հասարակական կարծիքը [illegible], որ արտայայտվել է ֆրանսիական մամուլի գլխաւոր օրգաններում, կանգնած են եղել այն անկեղծութիւնների բարձրութեան վրա, որպիսիները Ռուսաստանը իրաւունք ունի պահանջելու իր դաշնակցից: Կարելի է հաստատապէս հաւատացած լինել, որ այսուհետև էլ ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը կը մնայ եւրոպական խաղաղութեան նոյն յենարանը և ֆրանսիական ու ռուսական փոխադարձ շահերի երաշխաւորութիւնը, ինչպէս որ եղել է նա մինչև այժմ:

*

Այն ժամանակ երբ պրոգրեսիվ Ռուսաստանը ողբում է Մենդելէեւի կորուստը իբրև գիտնականի, հասարակական զանազան խաւերի մէջ սկսում է խօսել վրիժառութեան զգացմունքը դէպի հանգուցեալի յիշատակը, իբրև լոկ մարդու, քաղաքացու: Ժամանակակից երիտասարդութիւնը իր միակողմանի գործելակերպի մէջ շատ անգամ հասնում է ծայրայեղութիւնների, որոնց թւին է պատկանում չարաբաստիկ «բօյկօտը», որի գործադրութեան համար խտրութիւն չէ դրվում կենդանի մարդկանց և մեռածների մէջ անգամ: Օրինակ, Պետերբուրգի դիզագործների ընկերութիւնը նորերս հրաժարվել է յարգել Մենդելէեւի յիշատակը, պատճառաբանելով այդ վարմունքը նրանով, որ իրանց «համոզմունքները» չեն թոյլատրում: «Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է մի այլ փորձի մասին բօյկօտի ենթարկելու մեռած Մենդելէեւին:

Անկուսակցական մի պարոն լրագրում տպագրել է մի յօդուած, որտեղ պատմում է թէ ինչպէս

> Նոյն ձևով «դատապարտեցին» հանգուցեալին մայրաքաղաքի բարձրագոյն դպրոցներից մէկի ուսանողական աւագների խորհրդի մէջ: Պրօֆեսսօր Դ. Ի. Մենդելէեւի մահը հարց առաջացրեց աւագների խորհրդում. կարժէ՞ է, արդեօք, ուսանողութիւնը մասնակցել հանգուցեալի թաղմանը: Եւ գտնվեցին ուսանողներ, որոնք յայտնեցին, որ «անկարելի է ժամանակցել նախկին գաղտնի խորհրդականի և ասպետի ու համոզմունքով բիւրոկրատի թաղմանը»: Ի պատիւ ուսանողութեան, «խորհրդի» անդամների մեծամասնութիւնը դուրս եկաւ որ հակառակ կարծիքի էր ուսանողութեան հետ:

Այդ առիթով «Слово» լրագիրը հարց է տալիս.

> Ասացէք, ի սէր Աստուծոյ, ինչ կը նշանակէ այդ: Կարելի՞ է միթէ այնքան կուրանալ նեղ կուսակցական քաղաքականութեամբ, կարելի՞ է այդ աստիճանի դառնալ կուսակցական ոչխար, ամբողջ աշխարհի պարծանքը կազմող մի մեծ գիտնականի մէջ տեսնելու համար միայն գաղտնի խորհրդականի և ասպետի:
>
> Եւ ամենից լաւը այն է, որ Դ. Ի. Մենդելէեւի յիշեալ հակառակորդները իրանց գիտական դաստիարակութիւնը ստացել են հէնց նոյն Մենդելէեւից, նրա կլասիքական դասագրքերից ..

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երգչուհի օրիորդ Պապայեանի եւ նրա հօր սպանութեան գործը

Ամսիս 18-ին Աստրախանի նահանգական դատարանում երդուեալների մասնակցութեամբ լսվեց Պապայեանների սպանման յայտնի գործը, որի մէջ մեղադրվում է ոմն Թաղիեվ իր երեք ընկերով, որոնք և սպանել են օրիորդին ու նրա հօրը, կողոպտելու նպատակով:

Վաղ առաւօտեանից դատարանի փողոցում ու դռներում խռնվում է անհամբեր բազմութիւն հետաքրքրվողների: Մուտքը դատաստանական դահլիճ տոմսակներով է (150 հատ):

Դատաւորների կազմը.—Նախագահում է Ստեփանովիչ. անդամներ.—Վ. Վ. Աւագով, և պատուաւոր հաշտարար Ռակուսա-Սուշչևսկի: Մեղադրում է դատախազի օգնական՝ Ն. Ն. Բիրիկով:

Ցանկարծ լսվեց շղթաների ճնշող շռնդիւնը, մեղադրական նստարանի վրա երևացին յանցագործները, շրջապատված զինուորների բաւական խմբով: Նրանք թւով երկու են—առաջինը և գլխաւորը՝ Թաղիեվ: Միջահասակ, լայնաթիկունք, արտայայտիչ դէմքով թխադէմ, սափրված, թաւ բեխերով: Պահում է իրան համարձակ: Երկրորդը՝ Մամիշ-Բէկով, աւելի բարձրահասակ, գեղեցիկ դիմագծերով, բայց տխուր և ընկճված: Երրորդը՝ արդէն փախել է Ենոտաևսկի բանտից (Մաթուսով, պարսկահպատակ հայ): Սրանց երևալով, դահլիճը ծայրէծայր լցնող հասարակութեան մէջ նկատվում է զսպված վրդովմունքը:

Մեղադրեալներին պաշտպանում են տեղիս յայտնի փաստաբաններ Շմարին և Ժդանով (դատարանի կողմից նշանակված): Ներկայ են թղթակիցներ՝ «Մշակի», «Прикасп. Телеграфъ», «Астрах. Вѣстникъ», «Астрах. Листокъ» և «Губернс. Вѣдомости» լրագիրների խմբագրութիւնների կողմից:

11 ժամի մօտ սկսվում է գործի քննութիւնը: Նախագահը դիմում է Թաղիեվին.

—Ի՞նչ է ազգդ և անունդ:

Մեղադրեալ. — Աղա-Բէգ-Մուստաֆա-Բէկ-օղլի-Թաղիեվ:

—Ո՞ւմ հպատակն ես:

—Պարսկահպատակ:

—Քանի՞ տարեկան:

—41:

—Ո՞ւր ես ծնվել:

—Պարսկաստանի Արդաբիլ քաղաքում: Դաւանութեամբ մահմեդական եմ, օրինաւոր ծնունդ, գրագէտ: Բագւում ապրել եմ 16 տարի, Աստրախանում 6: Ամուրի եմ, 20 տարի է, որ կապալներով եմ պարապում, իսկ Պարսկաստանում ունեմ տուն, հողեր:

—Մեղադրական ակտ ստացե՞լ ես:

—Ստացել եմ, բայց ամբողջ գործի պատճէնը քանի անգամ է պահանջել եմ, չեն տալիս:

Նախագահ.—Հարկ էլ չը կայ տալու:

Այնուհետև դիմեց երկրորդ մեղադրեալին.

—Անունդ, ազգդ:

—Մամիշ-Բէկ-Սէյիդ-Բէկ-օղլի: Մահմեդա[illegible]նում և 4 տարի է, որ Ռուսաստանում եմ: Անգրագէտ եմ, ամուրի, Թաղիեվի հետ պարապում էինք կապալների գործով, իսկ Պարսկաստանում հող ունեմ:

Նախագահ.—Պարսկաստանում ձեր ունեցածների հետ գործ չունենք:

Ապա դառնալով Թաղիեվին, ասում է.

—Այդ ինչպէս է, որ դուք մի այլ գործում ձեզ անուանել էք Սէյիդ-Միր-Դամադ-օղլի:

—Այո, անուանել եմ, բայց այդ միևնոյն է. Միր մեզնում նշանակում է ազնուական. ես Բաթումի ազնուական եմ, իսկ Դամադ նշանակում է ժառանգական: Իմ տոհմի ծագումը սկսվում է մեր Մուհամմէտ մեծ մարգարէից:

Այնուհետև կարդացվեց վկաների ցանկը. երևաց, որ երեքը բացակայ են: Վիճաբանութիւն սկսվեց կողմերի մէջ՝ բացակայ վկաների առիթով:

Դատաւորներն և դատախազի օգնականը նշանակութիւն չեն տալիս 3 վկայի բացակայութեանը և վերջինս առաջարկում է՝ բաւականանալ վկայ Րիբակօվայի գրաւոր ցուցմունքով: Պաշտպանները պահանջում են դրանց բացակայութեան պատճառները: Պարզվեց, որ երկուսին կոչնագրեր չեն յանձնվել, իսկ Րիբակօվային ուղարկված է Մակինսկի գիւղական վարչութեան միջոցով և յանձնվելու մասին տեղեկութիւն չէ ստացված:

Բացակաների առիթով մեղադրեալների հետ խորհրդակցելու համար, պաշտպանների պահանջմամբ, դատը երկու անգամ ընդհատվեց: Վերջին ընդհատումից յետ պաշտպանները յայտարարեցին.

—«Մենք հակառակ ենք դատը շարունակել վկայ Րիբակօվայի բացակայութեամբ. նախ որ փաստ չունենք կոչնագիրը նրա ձեռքը հասնելու մասին, 2) մեր կլիէնտները յոյս ունեն, որ այդ կարևոր վկան (մեղադրեալների աղախինը) իր ներկայութեամբ աւելի լաւ կը պարզէ գործը և նրանց արդարանալու համար նոր բան կասէ. ուստի պահանջում ենք դատը յետաձգել: Իսկ եթէ դատարանը չի յարգի մեր պահանջը, այնուհետև մեր մեղադրեալները յայտնում են հետևեալը.—Ի նկատի ունենալով իրանց անորոշ, տարտամ դրութիւնը, դէմ չեն դատի շարունակվելուն, միայն պահանջում են Րիբակօվայի ցուցմունքը չը կարդալ դատարանում, քանի որ վերջինս բացակայ է իրանից անկախ պատճառով»:

Դատախազի օգնականի պահանջմամբ դատարանը որոշեց.—1) նշանակութիւն չը տալ երկու վկայի (Պիրադօվա և Շչերբակովա) բացակայութեանը, 2) կարդալ դատարանում երրորդ վկայ Րիբակօվայի ցուցմունքը դատական քննիչին տուած և 3) չը յետաձգել դատը:

Նախագահ.—Երրորդ մեղադրեալ Ալէքսանդր Մաթուսովը փախել է Ենոտաևսկ քաղաքի բանտից և փնտռվում է. դատարանը հնարաւոր է գտնում առանց նրա ներկայութեան շարունակել գործի քննութիւնը:

Պաշտպանները հակառակում են:

Կարճ խորհրդակցութիւնից յետոյ նախագահը յայտարարում է.—դատարանը վճռեց քննել գործը Ա. Մաթուսովի բացակայութեամբ, բաւականանալով նրա գրաւոր ցուցմունքը կարդալով:

Ներս հրաւիրվեցին երդուեալ դատաւորները: Քննվեց դրանց թիւը: Մեղադրեալների պահանջմամբ կողմից դուրս մնացին երկու հոգի անդամներ: Դրանց նախագահ յայտարարվեց ոմն Միկոլին, և բռնեցին նրանք յատկացված տեղերը:

Նախագահը զգուշացնում է դատական քննիչին—հեռացնել կողմնակի բազմութեանը շրջակայ միջանցքներից ու սենեակներից և այնուհետև սկսվում է մեղադրական ակտի ընթերցումը, որ հետևեալն է.

1905 թ. դեկտեմբերին Աստրախանի Բելգօրօդսկի փողոցում, Հուսէյնովի տանը ապրում էր Հ. Մ. Պապայեանը իր ժամանակաւոր և նոր վերադարձած օրիորդ Յոյս Պապայեանի հետ: Բնակարանը բաղկացած էր երեք սենեակից, որի մուտքը բակից էր: Նրանց մօտ աղախին պաշտօնով ապրում էր Աննա Պրիանիկօվան իր 6 տարեկան աղջկայ հետ: 1905 թւի դեկտեմբերի 28-ին երեկոյեան 6 ժամի մօտ Պապայեանների բնակարանի դուռը բաղխեցին: Երբ աղախինը բացեց, նախասենեակ մտան նրան անծանօթ երեք անձ, որոնցից մէկը ուսանողի գլխարկ ունէր: Տեղեկանալով որ Պապայեանների մօտ հիւր կայ, երեքն էլ դուրս գնացին, ասելով որ մի ուրիշ անգամ կը գան. մինչև անգամ ուսանողի գլխարկ կրող անձը դուրս գնալիս աղախինին ասաց. «Նայիր, չասես, որ մենք եկել էինք»:

Անծանօթների ետևից դուրս եկաւ օրիորդ Յ. Պապայեանը և ներս խնդրեց: Նրանք արագ հեռացան և մինչև անգամ ուսանողի գլխարկ կրող անձը աւելացրեց, որ նրանք շուտ միջոցում նորից կը գան:

Դեկտեմբերի 30-ի երեկոյեան 6 ժամին Պապայեանները սեղանատանը թէյ էին խմում: Օրիորդ Յ. Պապայեանի մօտ գտնվում էր աղախինի փոքրիկ աղջիկը՝ Օլգան: Դռան բաղխոցը լսելուն պէս, դուրս եկաւ աղախինը և տեսաւ նոյն երեք անձանց, որոնք եկել էին երկու օր առաջ: Տեղեկանալով որ Պապայեանները տանն են և նրանց մօտ կողմնակի մարդ չը կայ, երեքն էլ մտան Պապայեանների բնակարան:

Ուսանողի գլխարկ կրող պարոնը հանեց վերարկուն և ընկերներից մէկի հետ մտաւ սեղանատուն, իսկ երրորդը մնաց նախասենեակում: Աղախինը նախասենեակից նկատեց, որ ուսանողը բարձրացրեց ձեռքը սեղանի մօտ նստած Հ. Մ. Պապայեանի վրա և սրան հետևեց Յ. Պապայեանի ճիչը: Աղախինը, ինքնամոռացութեան մէջ, դուրս նետվեց դէպի բնակարանի մուտքը, բացեց դրան կարթը և սկսեց միջանցքով վազել, բայց սայթաքեց, վայր ընկաւ: Նախասենեակում սպասող անձը ընկաւ նրա ետևից, որին աջողվեց բռնել աղախինի քղանցքից նրա վայր ընկնելիս: Սակայն աղախինը ճչալով դուրս պրծաւ նրա ձեռքից և ընկնելով բակը սկսեց գոչել. «Կարաուլ, կարաուլ, սպանեցին, սպանեցին»:

Այդտեղ Հուսէյնովի բակում գտնվում է շրջանային ոստիկանական վարչութեան օգնականի բնակարանը: Ոստիկանական պաշտօնեաներ [illegible] լսելով Պրեանիկօվայի օգնութիւն գոչող ձայնը, նկատում են, որ աղախնի ետևից Պապայեանների բնակարանից դուրս վազեց ինչ որ մի անձնաւորութիւն և «ազատեցէք, ազատեցէք» գոչելով վազեց բակի միջով դէպի Բելգօրօդսկի փողոց տանող դուռը: Իսկոյն բռնում են նրան, և յայտնվում է, որ դա պարսկահպատակ Ալէքսանդր Մաթուսովն է, ուսանողական գլխարկը գլխին:

Պապայեանների բնակարանը մտնողները հետևեալ պատկերը տեսան. սեղանատան մուտքի մօտ, յատակի վրա, արեան լճի մէջ ընկած է Համբարձում Պապայեանը ջախջախված գլխով: Նա մի ձեռքով ջղաձգօրէն սեղմել է դրան պատառոտված վարագոյրը, միւս ձեռքով՝ երկաթէ գնդակ (կիստէն): Նոյն սենեակում, սեղանի մօտ, ջախջախված գլխով ընկած է նաև նրա դուստր Յոյսը:

Երկուսն էլ անզգայ դրութեան մէջ են, բայց երկուսն էլ ցոյց են տալիս կենդանութեան նշաններ: Իսկոյն նրանց փոխադրում են հիւանդանոց:

Պապայեանի ձեռքում գտնված սպանութեան գործիքը ծայրին ունի արճճի մեծ գունդ, պատած երկաթէ թելերի ցանցով: Այդ գունդին կապված է ճկուն, դիւրաթեք կոթ երկաթի լարերից հիւսված և թելերով փաթթված: Այդ գործիքի ծանրութիւնը 3 ֆունտ է: Բացի դրանից նոյն սենեակում գտնվեց փայտի կոթով մի երկաթի մուրճ, արիւնով պատած:

Ձերբակալված Մաթուսովը, սաստիկ գրգռված, ոստիկանութեանը պատմեց, որ Ա. Թաղիեվը իրան և առաջնի ազգական Մ. Բէկովին հրաւիրեց գնալ Պապայեանի մօտ 500 ր. ստանալու, որպիսի գումարը իբրև թէ Պապայեանը պարտական էր Թաղիեվին: Հէնց բնակարան մտնելուն պէս, Թաղիեվը և Բէկովը սկսեցին հարուածներ հասցնել Պապայեանի և աղջկայ գլխին, որից նա, Մաթուսովը սոսկալով բնակարանից դուրս վազեց բակը աղաղակելով. «Ազատեցէք, սպանում են. և այդտեղ ինձ պահնորդները ձերբակալեցին»:

Մաթուսովի ցուցմամբ ոստիկանի օգնական Խլինօվը իսկոյն ուղարկվեց Թաղիեվի բնակարան, որ գտնվում է Ⅴ-րդ թաղամասում, Կասարօվսկու տանը, Երկրորդ Բակալեյնիկի փողոցում:

Թաղիեվի և Բէկովի բնակարանը զննելիս ու խուզարկելիս (նրանք միասին մի բնակարանում էին ապրում), արեան հետքեր երևեցան երես-սրբիչի և Թաղիեվի ցերեկվան շալվարի ու ժիլէտի վրա: Բացի դրանից արեան բծեր կային նաև սեղանի սփռոցի վրա, որը գտնվեց լուացարանի վրա, և վերջապէս Թաղիեվի ննջարանում դրված պահարանից գտնվեց միանգամայն թաց բամբակի կտոր, որի վրա երևում էին արեան սրբուածքներ:

Թաղիեվի աղախիններ Նատալիա Շչերբակովայի, Ագաֆիա Պիրադօվայի և բնակարանի տէր Կասարօվսկու տուած բացատրութիւններից պարզվեց, որ Մաթուսովը շատ մօտ յարաբերութիւնների մէջ է Թաղիեվի հետ և միշտ նրա հետ միասին ժամանակ է անցկացնում:

Դեկտեմբերի 30-ին, ցերեկվայ 2 ժամին, Մաթուսովը եկաւ Թաղիեվի մօտ, և նրանք Բէկովի հետ երեքով խմեցին 1 շիշ օղի և երկու շիշ գինի:

Երեկոյեան 6 ժամին, նրանք երեքը միասին դուրս եկան բնակարանից: Այդ ժամանակ, երբ Պիրադօվա աղախինը տալիս է վերարկուն Թաղիեվին, նկատում է, որ վերարկուի գրպանում ինչ-որ մի ծանր բան կայ: Բացի դրանից նոյն Պիրադօվան հաղորդեց, որ սրանից քիչ առաջ նա Թաղիեվի սենեակում մի երկաթի մուրճ է տեսել: Դեկտեմբերի 30-ին Թաղիեվը պատուիրեց այդ մուրճը դնել գզրոցի վրա, բայց երեկոյեան, երբ երեքը միասին բնակարանից դուրս գնացին, մուրճը այլ ևս չերևեցաւ ոչ գզրոցի վրա և ոչ էլ ամբողջ բնակարանում: Գնալուց մօտաւորապէս մի ժամ յետոյ վերադարձաւ Թաղիեվը մենակ: Կասարօվսկու և Պիրադօվայի ասելով, նա արագօրէն անցաւ իր բնակարանը. խիստ գրգռված էր և գալուն պէս իսկոյն հանեց վերնաշապիկն ու ժիլէտը: Պիրադօվայի ցուցմունքով հէնց այն շապիկն ու ժիլէտն էին, որոնց վրա գտնվեցին արեան բծեր: Այնուհետև լուացվեց և նստեց թէյ խմելու: 15 րոպէից վերադարձաւ Բէկովը և, քիչ մնալուց յետ, գնաց և նորից վերադարձաւ ոստիկանների գալուց քիչ առաջ և նոյնպէս փոխեց ցերեկվայ շալվարը:

Դեկտեմբերի 30-ին, երեկոյեան, քաղաքային հիւանդանոց փոխադրվելով, Պապայեան հայրը մնաց անզգայ դրութեան մէջ և 1906 թւի յունվարի 1-ին վախճանվեց: Իսկ Յոյս Պապայեանը այստեղից փոխադրվեց գթութեան քոյրերի Իբերսկի ընկերութեան հիւանդանոցը, ուր և վախճանվեց յունվարի 20-ին:

Վիրահատութիւնից յետոյ, յունվարի 2-ին, Յոյս Պապայեանը ուշքի եկաւ: Եւ երբ բժիշկ Պերշինը հաւատացրեց, որ նա իր գլուխը ջարդել է ուշաթափման միջոցին վայր ընկնելիս, օրիորդը պատասխանեց. «Սուտ է, ես չեմ ուշաթափվել, բայց յիշում եմ, որ մեզ մօտ գողեր եկան, խփեցին հայրիկիս և ինձ... Յիշում եմ, որ նրանք մեզ մօտ երկու անգամ եկան... Առաջին անգամ տեսան, որ մեզ մօտ հիւրեր կան, ասացին, որ կը գան մի ուրիշ անգամ... Մի քանի օրից զանգակի ձայնի վրա աղախինը ներս թողեց հէնց նրանց, որոնք առաջ եկել էին: Մէկը ուսանողի գլխարկ ունէր, միւսը բարձրահասակ, գեղեցիկ բրիւնետ, իսկ երրորդին չեմ յիշում... Յարձակվեցին հայրիկի վրա... սկսեցին հարուածել նրան... ես առաջ նետվեցի նրան պաշտպանելու... գլխիս զարկեցին... ոչինչ այլ ևս չեմ յիշում»:

Այս պատմութիւնը միանգամայն համապատասխանում է Պապայեանների աղախնի փոքրիկ աղջկայ՝ Օլգա Կօրչունօվայի ցուցմունքին: Ասում է. «Ես նստած էի Պապայեանների հետ. յանկարծ ներս մտան երկու անձ, բարևեցին Պապայեանների հետ. նրանցից մէկը հեռուից ասաց. «բարև ձեզ», իսկ երկրորդը մօտեցաւ օրիորդին և ձեռք տուեց նրան: Առաջինը ինչ որ սպիտակ բանով սկսեց հարուածել պարոնի գլխին, իսկ երկրորդը՝ օրիորդին, որը ծնկաչոք ընկաւ խփողի առաջ»: Փոքրիկ վկան վերջացրեց իր խօսքը այսպէս. «Ես վախեցայ և դուրս վազեցի [illegible]»:

Պապայեանին ծանօթ ու նրան ճանաչող անձերի բացատրութիւնից երևում է, որ Պապայեանը Աստրախանում յայտնի է եղել որպէս հարուստ մարդ. բացի դրանից քաղաքում լուր էր պտտում, որ Աստրախան նոր վերադարձած օր. Յոյս Պապայեանը իր հետ բերել է մեծ գումարի թանկագին ադամանդներ և այլ արժէքաւոր իրեր, որոնց նա նուէր է ստացել որպէս օպերային յայտնի երգչուհի: Բացի դրանից նոյն անձերի բացատրութիւններից պարզվեց, որ Թաղիեվը, Բէկովը և Մաթուսովը ոչ մի ծանօթութիւն և մի որևիցէ յարաբերութիւն չեն ունեցել Պապայեանների հետ:

Որպէս մեղադրեալներ քննութեան ենթարկվեցին Թաղիեվը, Մամիշ-Բէկովը և Մաթուսովը: Թաղիեվը, միանգամայն մերժելով իր մասնակցութիւնը նկարագրված ոճրագործութեան մէջ, ասաց, որ Պապայեանների բնակարանում նա երբեք չէ եղել, նրանց չէ ճանաչում և, դեկտեմբերի 30-ին երեկոյեան տնից դուրս գալով Բէգօվի և Մաթուսովի հետ, հայոց եկեղեցու մօտից յետ վերադարձաւ տուն, ուր շորերը փոխելուց յետոյ, նստեց թէյ խմելու: Երես-սրբիչի, ժիլէտի և շալվարի արեան մասին այսպէս բացատրեց, որ նախօրեակին, ածիլվելիս, կտրել է կաշին իսկ բամբակի կտորը արիւնոտված է նրա համար, որ առաջին գիշերը նրա մօտ գտնվող կինը մենստրուացիա ունէր և սրբվեց այդ բամբակով:

Մամիշ-Բէկը, իրան մեղաւոր չը ճանաչելով, բացատրեց հետևեալը. ոճրագործութիւնից մի շաբաթ առաջ Թաղիեվը և Մաթուսովը նրան համոզում են միասին սպանել Պապայեանին նրա դրամից օգտվելու նպատակով: Առաջին անգամ նրանք ներս չը մտան Պապայեանների մօտ. տեղեկացան, որ հիւր կայ նրանց մօտ: Երկրորդ անգամ նրանք մտան Պապայեանի բնակարանը, և նա՝ Մամիշը մի անգամ բռունցքով խփելով նրան, դուրս եկաւ սեղանատանից, ուր մտաւ Թաղիեվը, որից յետոյ լսվեց այնտեղից Պապայեանների աղաղակը: Պապայեանների մօտ գնալիս, Թաղիեվը իր հետ վերցրեց երկաթի գնդակը, իսկ Մաթուսովը—մուրճը, որը սպանութեան օրը ինչպէս եղաւ, որ յայտնվեց Պապայեանների տանը, նա այդ չը գիտէ: Երես-սրբիչի և վերնաշապկի արիւնոտ լինելը նա բացատրեց, որ իր քթից արիւն է եկել և ինչ-որ մի տեղ ծեծվել է: Մաթուսովը, իրան մեղաւոր չը ճանաչելով, ասաց, որ նա Պապայեանների տուն գնաց Թաղիեվի խնդրով, պարտք գումարը ստանալու: Սեղանատուն մտնելուն պէս, Մամիշը սկսեց հարուածներ հասցնել Պապայեանի գլխին: Պապայեանի աղջիկը նայեց Մաթուսովին և Բէկովին «ինչու էք խփում»—հարցով և ընկաւ յատակի վրա: Այդ ժամին ներս վազեց սեղանատուն Թաղիեվը, և նա Մաթուսովը, իրան կորցրած, դուրս փախաւ բակ, աղաղակելով—«Ազատեցէք, ազատեցէք»:

Քննութեան ենթարկված Րիբակօվան հերքեց Թաղիեվի ցուցմունքը, ասելով որ ինքը բամբակ չէ գործ ածել:

Վերև յիշվածների հիման վրա պարսկահպատակներ Թաղիեվը 40 տարեկան, Մամիշ-Բէկով 25 տ. և Ալէքսանդր Մաթուսով 25 տ. մեղադրվում են նրանում, որ միասին պայմանաւորվելով նախամտածված դիտաւորութեամբ յափշտակելու Աստրախանի մեշչանիներ Համբարձում և Յոյս Պապայեանների գոյքը,—1905 թւի դեկտեմբերի 30-ին Աստրախանում Պապայեանների բնակարանում, որ գտնվում է Հուսէյնովի տանը Բելգօրոդսկի փողոցում, կեանքից զրկեցին Համբարձում և Յոյս Պապայեաններին, հասցնելով առաջնին կիստենով և երկրորդին մուրճով մահացու վէրքեր գլխի շրջանում. այսինքն մեղադրվում են այնպիսի յանցաւոր գործողութեան մէջ, որը նախատեսված է պատժական օրէնքների 13 և 4 կէտերում: Կազմված է 1907 թ. մարտի 4-ին Աստրախան:

Սրանով վերջացաւ մեղադրական ակտի ընթերցումը:

ԳԱՆՁԱԿՈՒՄ

Յունվարի 31-ին

Քաղաքի կողմից ընտրված մասնաժողովը մի քանի օր անընդհատ նիստեր ունենալով՝ քաղաքը բաժանեց ութը դասակարգի, որից երևաց, որ միայն 1018 անից կարող են շատ մեծ դժուարութեամբ տուգանքներ հաւաքել, որոնցից 19 տանը մի հարիւրական րուբլի, մնացեալները 1 ր. 50 կօպէկից սկսած մինչև յիսուն րուբլի:

Մասնաժողովի անդամները քաղաքը մի քանի մասերի բաժանելով՝ փորձեցին եռանդով հաւաքել դրած տուրքերը, բայց նրանք հիասթափութեան հանդիպեցին և միևնոյն ժամանակ եկան այն հաստատ համոզման, որ քայքայված և ծայրայեղ թշուառութեան դռներ հասած քաղաքացիք ոչ մի հնարաւորութիւն ու միջոց չունեն այդքան տուգանք տալու, այն էլ այդքան կարճ ժամանակամիջոցում:

Ես ինքս դժբախտութեան ունեցայ ծանօթանալու տուգանքի ենթարկվածներից մի քանիսի դրութեան հետ. իսկապէս որ հացագին չը գտնող մարդու համար դժուար է նոյն իսկ վճարել ամենաաննշան տուգանքը, երբ տանը աման ալիւրի փող չունի, երբ դրանը մի կտոր փայտ չունի սառած տունը տաքացնելու:

Ի նկատի ունենալով այս բոլոր հանգամանքը ու ժողովրդի դժուար կացութիւնը, յուսահատված ժողովուրդն այսօր խմբովին դիմեց քաղաքիս պաշտպանութեան վերահսկիչ գնդապետ Սաֆօնովին, յայտնեց իր վիճակը, բացատրելով դրված անհիմն և անարդար տուգանքը և տուգանքների հաւաքելու ամբողջ դժուարութեան պատմութիւնը, առանձնապէս կանգ առնելով քայքայված, սնանկացած և աղքատութեան ու մուրացկանութեան դռանը հասած ժողովրդի անելանելի դրութեան վրա, խնդրելով որ միջնորդէ վերացնելու նահանգապետի որոշած 8133 ր. 80 կ. տուգանքի կարգադրութիւնը. իսկ անկարելի եղած դէպքում գոնէ ժամանակ տրվի մինչև ժողովելը, որը անհագին դժուարութեան է հանդիպում: Գնդապետ Սաֆօնովը սիրով լսելուց յետոյ կտրականօրէն յայտնեց, որ ինքն իր կողմից չէ կարող որևէ միջնորդութիւն յանձն առնել Բաուէրի մօտ և չի էլ կարող աջակցել որևէ գործով:

Գնդապետ Սաֆօնովը յայտնեց, որ գեներալ-նահանգապետի մօտ իւրաքանչիւր օր անհագին թւով գանգատներ են մտնում հայերից և թուրքերից. մէկը միւսի վրա գանգատվում է, որ ծառեր են կտրում, տների պատերն են քարուքանդ անում և զանազան վնասներ են տալիս փոխադարձաբար. այդ պատճառով գեներալ-նահանգապետ Բաուէրը յայտարարում է հայ և թուրք հասարակութեան, որ այսուհետև այդպիսի յանցանքի համար ոչ թէ պէտք է պատասխանատուութեան ենթարկվեն մասնաւոր անհատները, յանցանք գործողները, այլ կողմերի ամբողջ հասարակութիւնը:

Այդ վայրկեանին երկու հայ գեղջկեցիք մօտեցան Սաֆօնովին և յայտնեցին, որ յունվարի 23-ին երկու հայեր՝ մէկը զոլախանեցի Տիգրան Դաւթեան անունով, միւսը գեօզալբեցի (Նոր-Բայազէտի գաւառ) Մարտիրոս Զաքարեան անունով սպանվել են թուրքերի ձեռքով Թուրքաց Թաղում այն ժամանակ, երբ լսվում է Լօլաձէի սպանութեան ժամանակի տրաքոցների ձայնը, որովհետև կարծել են, թէ թուրք-հայկական կռուարծը սկսվել է: Գանգատողները աւելացրին, որ դրա մասին թէև յայտնված է թաղական պրիստաւին, բայց վերջինս ոչ մի միջոց ձեռք չէ առած:

Գնդապետը կոչած հայերի անունները գրելով աւելացրեց, որ այդ մասին իրան ոչինչ չեն յայտնել և թէ ինքը հարկաւոր միջոցներ ձեռք կառնի:

Հայ հասարակութեան ներկայացուցիչները թւով մօտ 150 հոգի, Սաֆօնովի բնակարանից դուրս գալով գնացին գեներ. Բաուէրի մօտ: Գեներալը լսելով հայ հասարակութեան ներկայացուցիչ Յովսէփ Մելիք-Բէգլարեանի փաստալի բացատրութիւնները և ժողովրդի աննախանձելի ու դժուար կացութեան իրականութիւնը՝ կտրականօրէն յայտնեց, որ մինչև որոշեալ ժամը պէտք է ներկայացնենք 8133 ր. 80 կ., հակառակ դէպքում ինքը կարող է իր գիտցած միջոցներով ստանալ:

Ժողովուրդը յուսահատված հեռացաւ իր տները. թէ ինչ հետևանք կունենայ, կը հաղորդեմ:

Աւելորդ չեմ համարում հաղորդել, որ տուգանքների մի մասը [illegible] է, միւս մասը որոշված է վնասված կառապանների և Լօլաձէների օգտին:

Իսկ 3000 րուբլին տուգանք է. 320 րուբլին տուգանք է դրված այն պատճառով, որ Մովսէս Քօթանջեանի յուղարկաւորութեան ժամանակ ուսանողները երգել են Մարսէլիէզը...

Հայ հասարակութեան ներկայացուցիչները խնդրեցին, որ վնասվածների օգտին որոշվածները առ այժմ ստանան, իսկ գանձատուն մտնող տուգանքը առ այժմս մի քանի օրով յետաձգվի... Այս խնդիրքը ևս չը յարգվեց:

Աւելորդ չեմ համարում յիշել նաև այն հանգամանքը, թէ ինչպէս են գնահատված այդ տուգանքները:

Թուրք կառապանի սպանված երկու ձին գնահատված է 600 րուբլի:

Այդ դեռ ոչինչ. այնքան տարօրինակ և զարմանալի չէ. զարմանալին այն է, որ մեր [illegible]-կարդաշ մուսուլմանները, կարողանում ևն յարմար դէպքից և առիթից օգտվել։

Մի Թուրք առիթից օգտվելով յայտնել է իշխանութեանը, որ ինքը 40 հատ ոչխար է բերել հայոց Թաղը ծախելու, բայց տրաքոցների երկիւղից ոչխարները Թողնում է հայոց մասում ու փախչում, և իբրև հայերը այդ ոչխարները իւրացրել են։

Սա մի այնպիսի զրպարտութիւն է, որ խօսք չեմ գտնում այդ լրբութեան անունը տալու. բայց և այնպէս «բարեխնամ» ոստիկանութիւնը բարեհաճել է սիրայօժարաբար հայերին 20 րուբլի տուգանքի ենթարկել։

Ահա այժմ այսքանը մեր ցաւերից. եթէ այս «խաթաշատ» քաղաքում ուրիշ նորութիւն եղաւ՝ չեմ զլանալ յայտնելու։

Սադան

Յ. Գ.—Այս րոպէիս լուր հասաւ, որ գնդապետ Սաֆոնովի միջնորդութեան շնորհիւ գեներալ Բաուէրը զիջել է տուգանք առնելը 3 օրով յետաձգել։

Նոյն

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. Վ. ՍԻՐՏԻՆ

Վ. Սիրտը հրապարակ եկաւ, ինչպէս սպասելի էր, թէև ուշ, ճեմարանի նոր խլրտումների վերաբերմամբ իր «հեղինակաւոր կարծիքը» և ճշմարիտ եզրակացութիւնները «աշխատաւոր ժողովրդին» հաղորդելու։

Բայց նա հարկ է համարում իր յօդուածի առաջաբանում նախապատրաստել ընթերցող հասարակութեանը, որպէսզի գոնէ Վ. Սիրտին ծանօթ ընթերցողները նրա յօդուածի ակնյայտնի հակասութիւնները մի կերպ մարսեն։ Այդ նպատակի համար պ. Վ. Սիրտը ունի մի նոր աքսիօմա՝ «այլ է ճեմարանը այս տարի և այլ էր նա անցեալ տարի», ուստի ինչ որ նա այս տարի գրելու է՝ այլ է լինելու, քան ինչ որ անցեալ տարի գրում էր։

Այո, պ. Վ. Սիրտ, երբ մի գրող, երբ մի հասարակական գործի կամ հիմնարկութեան վերաբերեալ կատարվող անկանոնութիւններին նախանձախնդիր ոմն հրապարակ է գալիս միտումաւոր և անձնական տեսակէտներ և տենդենցիաներ առաջ տանելու համար, անշուշտ նա կարիք պիտի զգայ այդպիսի առաջաբաններ, որպէսզի հրապարակախօսական հակասութիւնները քօղարկվեն,

Միթէ, պ. Վ. Սիրտ, հրապարակական ստախօսութիւն չէ, երբ ներկայումս ճեմարանում կատարվող դպրոցական յուզումը դուք համարում էք «թեթև և խլուրդային խլրտում»։ Հասկանալի է, երբ կուրացած ճեմարանի բիւրոկրատիան իր երերուն և ապիկար ընթացքով պատճառ դարձաւ քսան և երկու աշակերտների և ուսանողների ճեմարանից հեռանալուն։

Ահա ինչ էք դուք ասում.

«Նոր տեսուչը աշակերտութեան տուեց ոչ միայն իրանց ուզած ազատութեան փշրանքները, այլ շատ աւելի քան նա պահանջել էր». այո, տալը շատ հեշտ է, երբ դա պաշտօնականութիւնից այն կողմը չէ անցնում։

Ի՞նչ էք հասկանում ազատութիւն ասելով.

Այն, որ այս տարի, Մեսրոպ վարդապետի անկզբունք տեսչութեան օրով անխտիր բոլոր աշակերտները ամեն ժամանակ՝ թէ պաշտօնական և թէ ազատ ժամերին իրաւունք ունեն թափառելու որտեղ ուզենան։

Այն, որ անցեալ տարվայ դասերի ժամանակ փախուստներին տեղի տուեց այս տարվայ խմբական բացակայութիւնները, առանց «ամենաազատամիտ» տեսչի որևէ հսկողութեան։

Այն, որ այս տարի բարձր դասարանների աշակերտներից և ուսանողներից շատերը, նոյնիսկ մոռանալով աշակերտական պարտականութիւնը, դոն-քիշոտների նման դաշնակցական մուֆթա ձիերով, ֆիզալու պախօղներով և խանջալներով անարգելը շրջակայ գիւղերի «աշխատաւոր մասսային» պրօպագանդա են անում։

Այն, որ մեր «մեծ եղբայրները», դուք երրորդ լսարանցիքդ չունենալով շաբաթական նոյնիսկ պաշտօնական 15 դաս, սերտողութիւններին զուարճութեամբ էք զբաղված, ձեր դափ ու զուռնով ուրիշներին խանգարելով։

Այն, որ մեր «փոքր եղբայրները» Վաղարշապատի անբարոյական մեկիտաններում գիշերները ամենափչացած անձնաւորութիւնների հետ են անցկացնում, առանց նոյնիսկ այդպիսի դէպքերը վարչական խորհրդակցութեան նիւթ դարձնելու։

Այն, որ տարվայ սկզբին աշակերտութեան յայտարարվում է «ընկերական դատաստանի» գոյութեան օրինաւոր ճանաչելը, բայց երբ գալիս է ժամանակ գործադրելու արգելվում է։

Այն, որ, պ. Վ. Սիրտ, մեր իդէալ տեսուչը համակերպվելով մեր պահանջին կրճատեց փիլիսոփայական և իրաւաբանական դասերը և նրանց տեղը մտցրեց արխէօլօգիա, (այսինքն իր ինքնակենսագրութիւնը)։

Այն որ լսարանցիները փոխանակ մի գրպանաւոր բլուզներ հագնելու, իրաւունք ունին 3—4 գրպանաւորը հագնել։

Այն, որ փոխանակ առաւօտեան սերտողութիւնների ժամանակ վերկենալու, լսարանցիներն իրաւունք ունեն երկրորդ դասի ժամանակ քնաթաթախ լսարան մտնելու։

Եւ դուք, պ. Վ. Սիրտ, այդ վերոյիշեալ ազատութիւնները աւելի էք համարում քան մեր պետիցիայով պահանջած ազատութեան «փշրանքները»։

Միթէ գոհացնում են ձեզ այդպիսի նորմուծութիւնները, ձեզ, պ. Վ. Սիրտ, որ պահանջում էիք անցեալ տարի ճեմարանը բոլորովին անջատել վանքից։ Դուք, անցեալ տարվայ ծայրայեղ ձախակողմեաններդ, կարողանում էք բաւականանալ այս տարի վերոյիշեալ «յանցաւոր» ազատութիւններով։ Ա՜խ, հա, ինչ եմ ասում, չէ՞ որ դուք այդ բոլոր հակասութիւններից վերացնում էք ձեր աքսիօմայով «այլ է ճեմարանը այս տարի, և այլ էր նա անցեալ տարի»։

Ո՛չ, պ. Վ. Սիրտ, դա ինքնախաբէութիւն է. դուք չէք կարողանում զանազանել ազատամտութիւնը և անկզբունք գործօնէութիւնը։ Եթէ մենք էլ գտենք հայր Մեսրոպի ազատամիտ խոստումներով միայն, բայց երբ գալիս է գործնականը, այն ժամանակ արդէն կարելի է լինում զանազանել կեղծը իսկականից։

Ինչպէս հաշուեցինք ազատամիտ տեսչի ամենակերպական վարմունքը ձեր ներբողականի հետ։ Հա, մոռացել էի ձեր աքսիօման՝ որովհետև «այլ է ճեմարանն այս տարի և այլ էր նա անցեալ տարի», ուրեմն տեսուչը «ազատամիտ է»։

Այժմ թողնելով, պ. Վ. Սիրտ, ձեր փիլիսոփայական գոհարների մասին խօսելը, որի մէջ դուք հանդէս էք գալիս ամենապահպանողականի մը խղճուկ վիճակովը (եթէ չէք հաւատում, կարդացէք ձեր յօդուածի «բաւական չէ ազատութիւն ստանալ...» մինչև «գալով ճեմարանում...»)։ Կանգնեմ ես մի քանի կէտերին, որոնք վերաբերում են մեր ճեմարանից դուրս գալուն առիթ տուած դէպքերին։

Դուք ասում էք, «գալով ճեմարանում նըկատվող ինչ որ թեթև խլրտման...». շատ թեթև դէպք է չէ՞, պ. Վ. Սիրտ, աւելի թեթևքան անցեալ տարվայ մի 6-րդ դասարանցու դուրս անելու դէպքը, որի ժամանակ դուք լրագրութեան մէջ ձեր սրտի մաղձն էիք թափում տիրող րեժիմի դէմ և ամենաազատամիտ րէֆօրմներ էիք պահանջում. ինչու, որովհետև անցեալ տարի պատահաբար գտնվում էինք այն բանակի մէջ, որը վերստին ընդունել էր պահանջում, իսկ այս տարի պաշտպան էք հանդիսանում ճեմարանի «գիշերօթիկներին, պարտադիր օրէնքներին», որովհետև անձնական հաշիւներից դրդված գտնվում էք այն բանակի մէջ է, որը պահանջում է անպայման արտաքսել ուսանողներին։ Պատասխանը պատրաստ է. «Այլ է ճեմարանը այս տարի և այլ էր նա անցեալ տարի», ուրեմն կարելի է այս տարի լինել պաշտպան բիւրոկրատիայի քմահաճոյքներին։

Դուք, պ. Վ. Սիրտ, խլուրդային էք անուանում այն շարժումը, որի համար քսան և երկու աշակերտներ և ուսանողներ հեռացան ճեմարանից կենսական ներկայ ամենաանհրաժեշտ հանգամանքներում։ Պ. Վ. Սիրտ, պարզ խօսեցէք, ազատ արտայայտեցէք, խօսքի ազատութիւնը է, ինչ էք ուզում ասել, կամ ինչի մասին էք ակնարկում։

Խնդրում եմ, պ. Վ. Սիրտ, ասացէք՝ ինչ նպատակով էք հաշտեցնում հետևեալ հակասութիւնը. անցեալ տարի պահանջում էիք 6-րդ դասարանցուն արձակելու համար նոր քննութիւն, իսկ այս տարի մարգարէանալով ճշմարտութիւնը պահանջում էք անպայման հեռացնել արձակվածներին առանց քննութեան. մի՞թէ, ներողութիւն, էլի մոռացայ, որ հակասութիւնը վերանում է ձեր աքսիօմայով՝ «այլ է ճեմարանը այս տարի և այլ էր նա անցեալ տարի»։

Մի խօսք ևս։

Դուք գրում էք. «Սակայն ճեմարանի աշակերտութեան գիտակից մեծամասնութիւնը իր անաչառ քննութեամբ և վերաբերմունքով որոշում է անպայման արձակված համարել ուսանողներին»։ Ի՞նչ էք ուզում ասել, պ. Վ. Սիրտ. մի՞ն, որ դուք մեծամասնականներդ անաչառ քննութիւնից յետոյ էք այդ եզրակացութեան եկել. բայց չէ՞ որ դա բացարձակ ստախօսութիւն է։

Դուք և ձեր մեծամասնականներից շատերը առաջին ժողովին չէիք մասնակցում, որտեղ մենք լսեցինք արձակվածների բացատրութիւնները. իսկ երկրորդ ժողովում, երբ մանկավարժ. ժողովի վճիռը կարդացուեց, դուք անմիջապէս հիացաք արդար համարելով այդ վճիռը. միւս կողմից վարչութիւնը թէ ձեզ և թէ մեզ փաստերի լուսաբանութիւն չը տուեց, ուրեմն ասացէք խնդրեմ, ինչ միջոցի դիմեցիք ձեր անաչառ քննութիւնը կատարելու համար։ Զուր եմ երկարացնում, պ. Վ. Սիրտ, որովհետև «այլ է ճեմարանը այս տարի և այլ էր նա անցեալ տարի» ուրեմն կարելի է բացարձակ ստախօսութիւն անել։

Վերջացնելով խօսքս, ձեզ եմ դիմում, ճեմարանում մնացած մեծամասնական ընկերներ. եթէ ձեր արտասուքները մեզ ճանապարհ դնելու ժամանակ կեղծ չէին, եթէ դուք տըխրում էիք մեր հեռանալու ժամանակ անկեղծօրէն, հրապարակ եկէք և ինքներդ մեզ մեղադրեցէք և ոչ թէ ձեր թիւր ուրիշներին շահագործել տուէք։ Կամ դուք ձեր լռութեամբ ցոյց տուէք, որ ձեր արտասուքները կոկորդիլոսի արտասուքներ էին, կամ ասպարէզ եկէք և ապացուցէք, որ դուք գիտակից մեծամասնականներ էք, ինչպէս պ. Վ. Սիրտը ձեզ շողոքորթում է։

Allons

ՅԵՏԱՄՆԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Նոր-Բայազէտ, յունվարի 20-ին

Նոր-Բայազէտի գաւառի ժողովուրդը, իր կեանքի զանազան հանգամանքներում, շատ յետ է մնացել ամեն բանից։ Մինչդեռ մերձակայ գաւառները և նրանց համայնքը, շփվելով հարևան շրջանների, երթևեկ տեղերի բնակիչների հետ, մի փոքր առաջ է գնացել և զարգացել թէ ուսումով և թէ գաղափարով, մեր գաւառացին, ընդհակառակն, իբրև մի յետ ընկած շրջանի հասարակութիւն, զուրկ է թէ ուսումից, եթէ կրթութեան և դաստիարակութեան գործից և թէ ընթերցասիրութիւնից, դեգերելով միշտ իր պապական սովորութեան և նախապաշարմունքների մէջ...

Անցէք տասնեակ գիւղեր, մեծագիւղ աւաններ (մօտ 2—300 տուն) այդ գաւառում, և դուք չէք հանդիպի ուսումնարանների։ Մօտ 120 հայ, թիւրք, ռուս, քուրդ և այլ գիւղերում դուք կը գտնէք 4—5 հատ տարրական ռուսաց դպրոցներ և այդքան էլ հայոց ուսումնարաններ։ Ուրեմն ասել է ընդամենը մի 10 գիւղ ունեն դպրոցներ, իսկ մնացեալ հարիւրից աւելի գիւղերի և աւանների ժողովուրդը բոլորովին զուրկ է որևէ կրթական հիմնարկութիւնից։

Ո՞վ պէտք է, արդեօք, ձեռնարկէ այդ գործին կամ ում պարտքն է գալիս կանգնել կրթական հիմնարկութիւնների գործին և մի փոքր մխիթարական աստիճանների վրա դնել գաւառի յետամնաց ժողովրդի մտաւոր զարգացման գործը։ Միթէ գաւառի ինտելիգենցիան,—որ դժբաղդաբար գոյութիւն չունի այդպիսի մի արժանաւոր դասակարգ, իսկ եթէ գտնվեն էլ հատ-հատ ինտելիգենտ մարդիկ այս և այն գիւղում կամ աւանում.—դրանք էլ մի կողմից ընդհանուր ձգտում և կապ չունեն իրար հետ, իսկ միւս կողմից նրանք այն աստիճան յետադէմ են, ինչպէս ինքը՝ գաւառական ժողովուրդը։ Չէ՞ որ յետամնաց ժողովուրդը կունենայ նաև յետադէմ ինտելիգենցիա... Միթէ գիւղական քահանաները. բայց տարաբաղդաբար դրանք էլ բոլորովին տգէտ, ինտրիգանտ և աւելի յետամնաց են, քան ինքը բուն ժողովուրդը...

Ապա ում պարտքն է հոգալ ուսումնարաններ հիմնելու մասին. երևի գործակալութիւնը, կասէք դուք։ Բայց չէ՞ որ Էջմիածինը այդ վերաբերմամբ շատ քիչ հրահանգներ է տուել իր գործակալներին և նրանց օգնականներին, որոնք զբաղված են միմիայն պսակագրամ և պտղինք հաւաքելով Վանքի (Էջմիածնի) օգտին, իւղ և պանիր ժողովելով վանականների համար ու քահանայական զանազան խարդախութիւններ ու վէճեր քննելով և... ուրիշ ոչինչ կամ գրեթէ ոչինչ...

Սակայն ոչ ոք չէ կարող ուրանալ, որ մեր գաւառի ժողովուրդը, ինչպէս նաև շատ տեղերինը, հալից ընկել է, քայքայվել թէ տնտեսապէս և թէ նիւթապէս։ Թող ձեռնհաս անձինք կամ հիմնարկութիւնները հոգ տանեն մխիթարելու ժողովրդին գոնէ մտաւոր զարգացման վերաբերմամբ, հայթայթելով նրան մի փոքր ուսում, կրթութիւն և տարածելով ընթերցասիրութիւնը մեր յետամնաց ժողովրդի մէջ։ Ահա թէ որն է աւելի ցանկալին...

Որսորդ

ՄԻ ՈՒՐԱԽԱԼԻ ԵՐԵՒՈՅԹ

Մեր ժողովուրդը, մանաւանդ գիւղացիութիւնը, տգէտ է և տնտեսական կողմից աղքատ. հարկաւոր է լուսաւորել նրա միտքը և տալ գործնական գիտութիւն օգտվելու բնութիւնից։ Եւ երբ այս մտքով հանդէս է գալիս մի նախաձեռնութիւն, նա անշուշտ արժանի է համակրութեան։ Այս տեսակէտից, այն հիմնարկութիւնը, որը նախաձեռնում են հանգուցեալ Եգոր Ալ. Դաւթեանի ժառանգները, աղքատ տգէտ, ժողովրդին գործնական գիտութիւններ տալու համար, մեր, հայերիս մէջ, առաջինը պէտք է համարվի և մեծ հետաքրքրութիւն շարժէ հասարակութեան մէջ։ Օր. Մարիամ, Բալի և պ. Բարսեղ Դաւթեանները խորհրդակցութեամբ երդ. հաւատարմատար Ս. Ցարութիւնեանի որոշել են բացել իրանց նախահայրերի ծննդավայրում—Ղազախի գաւառում—գիւղատնտեսական դըպրոց հանդերձ արհեստագիտական բաժանմունքներով։

Պ. Ցարութիւնեանը, գալով յունվարի վերջերին Ղազախ, բանակցեց Բարդանսարա գիւղի հասարակութեան հետ հողի մասին, և հասարակութիւնը մեծ ուրախութեամբ յանձն առաւ տալ դպրոցի համար մինչև 100 դես. հող և աջակցել ուրիշ միջոցներով։ Ընտրված հողը շատ յարմար տեղ է և իր դիրքով ու կլիմայի տեսակէտից համապատասխան է գիւղատնտեսական նպատակների համար։

Բարդանսարայի հասարակութիւնը հողի մասին կազմեց և տուեց պ. Ցարութիւնեանին համաձայնական, յայտնելով իր ցնծութիւնը և զգացմունքները նուիրատու, բարերար Դաւթեաններին։

Այս լուրը ցնցել էր Ղազախի ազգաբնակութիւնը. շատ գիւղերից եկել էին ներկայացուցիչներ յայտնելու թէ իրանց ուրախութիւնը և թէ պատրաստականութիւնը օգնելու գործին աշխատանքով և նիւթեղէնով։

Դպրոցը լինելու է երեք-չորս դասեան, ուսումնասիրութեան առարկաները լինելու են հողագործութիւն, անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն, մեղուաբուծութիւն, շերամապահութիւն, այգեգործութիւն և մի քանի գիւղական կեանքում անհրաժեշտ արհեստներ։ Աշակերտներ ընդունելու են գիւղական դըպրոցները աւարտողներից առանց ազգի խտրութեան։

Նուիրատուները եռանդով են վերաբերում գործին և ցանկանում են շուտ իրագործված տեսնել իրանց որոշումը. պատրաստվում է կանոնադրութիւն և ծրագիր թոյլտուութիւն ստանալու համար։ Թէև այս դպրոցը կարող է ծառայել և միւս գաւառներին, բայց ցանկալի է, որ մեր ունևորները հետևէին Դաւթեանների օրինակին և բացէին համանման դպրոցներ ուրիշ տեղերում։

Տուէք ժողովրդին այս տեսակ հիմնարկութիւններ և դրանով կազատէք նրան խաւարից և աղքատութեան ճիրաններից։ Գիւղատնտեսական դպրոցները կը լինեն այն գլխաւոր ֆակտորը, որի միջոցով կը ստեղծվի գիւղական ինտելիգենցիա՝ կապված ժողովրդի և հողի հետ։

Z.

ԹՒԱՆՇԱՆՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

Վերջին ամբողջ շաբաթվայ ընթացքում դաշնակցական հրապարակախօսները, իրանց դաղված սիրտը հովացնելու համար, անվերջ ճիգեր են թափում ստատիստիքական թւանշաններով ապացուցանելու, որ Դաշնակցութիւնը բոլորովին պարտութիւն չէ կրել, այլ ընդհակառակը, եթէ կուզէք, նոյնիսկ բարոյական յաղթութիւնը նրա կողմն է, «որովհետև,—ճառում են մէջքի վրա ընկնելու սովորութիւն չունեցող պարոնները,—ստատիստիքական թւանշանները ապացուցանում են, որ, անցեալ տարվան ընտրութիւնների համեմատութեամբ, այս տարի թէ սօցիալ-դեմօկրատները և թէ մանաւանդ կադէտները շատ աւելի պակաս քուէներ են ստացել»։

Խօսք չունենք, ի հարկէ. թւերի դէմ անկարելի է վիճել, երբ մանաւանդ թւերի հետ զանազան Վաչէներ à la Թոփչեան այնպէս անբարեխիղճ վարվել գիտեն։ Սակայն, մի շատ պարզ հարց այդ պարոններին. իսկ եթէ անցեալ տարվան ընտրութիւններին Դաշնակցութիւնը մասնակցած լինէր, ինչ էք կարծում, նա այն ժամանակ շատ աւելի քուէներ վաստակած չէ՞ր լինի, քան վաստակեց այս տարի։ Ո՞ր աստիճանի արդեօք պիտի հասնէր դաշնակցականների վայնասունը, եթէ նրանք իրանց ձեռքի տակ ունենէին այդպիսի համեմատական թւանշաններ, որոնք, հաւատացած ենք, փառաւորապէս պիտի ապացուցանէին, որ այս տարվան դաշնակցականների քուէները պակասել են ոչ թէ հարիւրներով, այլ ուղղակի հազարներով։

Եւ միթէ այդ ամենապարզ հանգամանքը այդ դեմագոգ հրապարակախօսները չը գիտեն ու չեն հասկանում։

Պ. պ. դեմագօգները իրանց ստատիստիկայով ցոյց են տալիս, որ սօց.-դեմօկրատները այս անգամ մօտ 2—3 հարիւր քուէով պակաս են ստացել անցեալ տարվայ համեմատութեամբ։ Եւ այդ բանը այնպիսի ձևով ու ոճով է ասված, որ «Ժամանակի» միամիտ ընթերցողը կարող է այնպէս հասկանալ, թէ այդ 2—3 հարիւր ձայները, սօց.-դեմօկրատներից բաժանվելով, Դաշնակցութեան կողմն են անցել։ Բայց այդպէ՞ս է արդեօք իրապէս. քանի՜ հատ սօց.-դեմօկրատներ են եղել, որոնք, թողնելով իրանց կուսակցութիւնը, Դաշնակցութեան կողմը անցնէին։ Միթէ դուք թոյլ էք տալիս, թէ մեր հասարակութիւնը գնալով աւելի ու աւելի յետադիմում է։ Մինչդեռ անհերքելի իրողութիւն է այլևս, որ հազարաւոր մարդիկ կան այժմ ոչ միայն Թիֆլիսում, այլ և բոլոր հայաբնակ քաղաքներում, որոնք ինչպէս որ անցեալ տարի իրանք իրանց «դաշնակցական» էին համարում, նոյնպէս էլ այս տարի խորշանքով հեռու են փախչում Դաշնակցութիւնից։ Սակայն, ցաւալին էլ հէնց այն է, որ տասնեակ տարիներով ազգայնական ոգով ու շովինիզմով դաստիարակված հայերի այդ փախուստը ազգայնական մուրքից հեռու չէ լինում։

Դեռ ընտրութիւններից առաջ մենք ասել էինք, որ ի զուր տեղն են դաշնակցականները գլուխ պատռում, հազար ու մի տեսակ խարդաւանանքների ու բռնութիւնների դիմում, քուէներ վաստակելու համար, որովհետև շովինիզմի իւղով տապակված մեր հասարակութեան մեծ մասը, սրտի խորքում ատելով հանդերձ Դաշնակցութիւնը, այնուամենայնիւ սրա թեկնածուներին կը տայ իր քուէները, մանաւանդ որ մեր հասարակութիւնը, քաղաքականապէս դեռ ևս անզարգացած լինելու պատճառով, թէ այս ընտրութիւնների և թէ բոլոր ընդհանուր պետական գործերի վրա նայում է լոկ ազգային տեսակէտից։

Մենք բոլորովին սխալված չէինք եղել. այս ընտրութիւններին Դաշնակցութիւնը ստացել է մօտ 4500 զուտ հայ քրիստոնեաների ձայներ, մի բան, որ իրապէս երբէք գոյութիւն չէ կարող ունենալ. անկարելի է ենթադրել, որ ամեն կողմով երեսից ընկած Դաշնակցութիւնը Թիֆլիսում 45007-ի չափ համակրողներ ունենայ։ Ընդունելով հանդերձ, որ դրանցից մօտ 1500 հոգին Դաշնակցութեան թեկնածուների երեսից։ Յիշեն թող յունիսի 13-ը, յուլիսի 8-ը, հոկտ. 14-ը և ներկայ յունվարի առաջին օրերից մին, պատմական օրեր Ագուլիսի տարեգրութեան համար։ Յիշեմ սակայն վերջին շարժառիթը, որից ծնունդ է առած ինչպէս ինձ ուղարկված յունվար 26 թ. սպառնական նամակը, նոյնպէս և յուն. 14 թ. սպառնական թռուցիկը «Ագուլիսի հայ հասարակութեան» հասցէին։

Այդ օրը, յունվարի 14-ին, ծխական ժողով կար դպրոցի սրահում, ուր իմ նախագահութեան ներքոյ ընտրվեցին վանքի համար նոր հոգաբարձուներ։ Դպրոցի տեսուչը իրայիններով շատ ջանաց հպատակեցնել իր հաւանութիւններին ներկայ եղող հասարակութեանը։ Չաջողեց, որովհետև հասարակութիւնը մօտիկ անցեալի փորձերից խրատված՝ շատ լաւ գիտէր, որ իր դիմաց կանգնած վեղարաւորն աւելի անկեղծ, անշահասէր բարեկամ է իրան, քան այն պարոնները, որոնք, ինչպէս ասացի, գիտեն շահագործել միայն։ Ուստի և մեր պարոնները, չը ձայնակցելով ժողովի մեծամասնութեանը հոգաբարձական ընտրութեան գործում, ուշ ժամանակ դուրս են գալիս ժողովից, րօպէապէս ստեղծում մի «հսկիչ մարմին», խմբագրում են յայտնի թռուցիկը և միւս օրը եկեղեցից դուրս գալիս ցրվում դէպի ինձ։

Ո՛չ այն պատրուակը, որով ուզում են օրինականութեան գոյն տալ իրանց ապօրինի գրութեան իմ հասցէին, ոչ այն պատճառները, որոնց մասին լռում եմ ի պատիւ իրանց և այն կուսակցութեան, որի ոյժին յենված գործում են, և ոչ յիշատակածս շարժառիթը չեն արդարացնի երբէք որևէ եղերական քայլ իմ կեանքի դէմ։ Ով ինչ ունի ասելու, թող հրապարակ դուրս գայ և լրագրութեան մէջ ասէ. պատրաստ եմ պատասխանելու։ Ճշմարտութիւնն ու արդարութիւնը, որոնց անունից «գաղտնի դատավճիռներ» են ուզում գործ դնել, խաւար, անյայտութիւն չեն սիրում։ Հրապարակ դուրս եկէք, եթէ արդար էք, պարոններ. և ով անարդար է՝ թող նա տուժէ, պատժվի հասարակաց դատաստանով։

Մի վերջին խօսք. ինքս իբրև հոգևորական, իբրև աւետարանի աշակերտ, և չը պատկանելով գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւններից և ոչ մէկին, հրապարակով խնդրում եմ ինձ համակիր բոլոր այս կամ այն կուսակցութեան պատկանող բարեկամներից երբէք վրէժխնդրութեամբ չը պատասխանել, եթէ երբէք իրագործվի իմ կեանքի դէմ որևէ ոճրագործական անխիղճ ծրագիր։ Ես եմ տուժելու, ես ներում եմ, որովհետև սրանք դեռ «չեն իմանում, ինչ են անում»։

Մեսրոպ վ. Մաքսուդեանց

Յ. Գ.—Նամակիս մէն մի կէտի համար պատասխանատու եմ ես միայն։

Նոյն

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐ

III

«Ձայն» շնորհիւ առանձնապէս բոնկվեց «Նոր Կեանք»-ի յարուցած և յետագայում անչափ ծեծված «ռուսահայ կամ տաճկահայ» խնդիրը։

Իբրև ռուսահայատեաց մի հրապարակութիւն, ամենաանողորմ կերպով հալածող կովկասեան դրոշմ կրող ամեն մի նախաձեռնութիւն, «Ձայն»-ը բնական է որ մի կատաղի արշաւանք սկսէր տաճկահայ խնդրում ռուսահայերի որևէ մասնակցութեան դէմ։ Վերակազմեալները և իրանց ղեկավարները մի յիմար տրամաբանութեամբ բոլոր ռուսահպատակ հայերին դաշնակցականների տեղ դնելով՝ հակառուսահայ հալածանքի միջոցով կարծում էին թէ՝ իրանց հակառակորդ մի կուսակցութեան դէմ մաքառած պէտք է լինէին։ Ռուսահայատեցութիւնը անպայման պահանջելի լօզունգ էր անկեղծ ու բարեպաշտ վերակազմեալի համար. ռուսահայ և ռուսահայկական մի երևոյթ հալածելը վերակազմեալութիւնը պաշտպանել էր նշանակում, նրանց վարկաբեկումը ու տապալումը՝ Դաշնակցութեան անկումը, որի դիակի վրա պիտի ամրապնդվէր իրանց փառքը, մեծութիւնը և... Զէյթունի անկախութիւնը...[1]։

Այդ նպատակին հասնելու մտքով՝ ամերիկահայ Ոլիմպոսի թզուկները արհաւրալից ամպրոպներ էին ձայթեցնում Նալբանդեանի, Րաֆֆիի, Արծրունու, Գամառ-Քաթիպայի գերեզմանների վրա, կաշից ելնելով նրանց գրական հասարակական գործունէութեան ոչնչութիւնը և տաճկահայ հարցում անպայման վնասակարութիւնը ապացուցելու համար։

Բացարձակօրէն կովկասցիներին տաճկահայ խլրտումների հեղինակ և նրանց հետևող կոտորածների պատճառ համարելով՝ «Ձայնը» հասաւ այն ծայրայեղութեան, որ «ռուսահայ պահիճներին» ռուս և թիւրք կառավարութիւնների գիտակից գործիք համարեց, հայկական ջարդերը կազմակերպելու գործում։ Երևի այդ կոյր ատելութիւնն էր, որ ստիպում էր այդ թերթի վարիչներին անվայել հրճուանքով արձանագրելու Բագուի առաջին հայ-թաթարական ընդհարումը, որովհետև նա մի պատիժ էր «դաշնակցական և թիւրքահայի գերեզմանը պատրաստող ռուսահայերի» դէմ, և աւետում էր ի լուր աշխարհի Բագուի հայերի «էշերու պէս կոտորուիլը»։

Կովկասեան աղէտները ցնցեցին աշխարհի այլևայլ անկիւններում թափառող հայերի սրտերը և յաճախ այնպիսի կորած վայրերից ցաւակցութեան և վշտի ձայներ լսվեցին ու դրամական օժանդակութիւններ սկսեցին տեղալ աւերված Կովկասին, ուր առաջ դժուար էր մի հայի գոյութիւն ենթադրել։ Բնական է, ամերիկահայ մամուլը անկարող էր խուլ ու կոյր ձևանալ ընդհանուր ազգային աղէտի հանդէպ։ Տեղական հրատարակութիւնները բազմաթիւ գրութիւններով պարզելով ամերիկահայ հասարակութեան առաջ կովկասեան արիւնոտ իրականութիւնը՝ կոչ կարդացին օգնելու համարին թէև հեռաւոր հայրենակիցներին, և հանգանակութիւններ բացվեցին զանազան հայաբնակ վայրերում։ Պէտք էր այստեղ լինել զիտելու և ըմբռնելու ժողովարարութիւններ կազմակերպողների կրած անախորժութիւնները, յաճախ բացարձակ կռիւը վերակազմեալների այն մութ և շատ անգամ էլ յայտնի կերպով լարված դաւադրութիւնների դէմ, որոնք ուղղված էին ամեն կերպ տապալելու այդ ձեռնարկները։ Պէտք էր հետևել, թէ ինչ ստոր միջոցներ միայն չէին գործադրվում, որպիսի ծաղր ու հալածանք էր բացվում դէպի լենկթիմուրեան արիւնոտ ուրուականի զոհերը. նրանց օգնութիւն անելը մի տեսակ սրբապղծութիւն էր ընդունվում վերակազմեալ հնչակեանութեան նուիրական սըկզբունքների դէմ։

Ահա այդ անմաքուր պրօպագանդի շնորհիւ էր, որ Միացեալ-Նահանգները բազմաթիւ հայաբնակ կենտրոններում եթէ նոյնիսկ տեղի ունեցան կովկասանպաստ հանգանակութիւններ՝ բայց կուսակցական (դաշնակցական—գրեթէ միշտ) բնաւորութիւն կրեցին և երբեմն էլ չէզոք հասարակութեան նախաձեռնութեամբ։ Չը լինէր վերակազմեալ ղեկավարների խառնակող մատը՝ ամերիկահայը սիրով կը տար և հինգ անգամ աւելի մի գումար, քան հաւաքվեց շատ աննպաստ պայմաններում [2]։

Այդպիսի կուսակցական նեղմտութիւնները, բնականաբար, չէին կարող միանգամայն մեռցնել ժողովրդի խիղճը և նրա զգացմունքները։ Թէև «Ձայն»-ը յամառ լռութիւն էր պահպանում Կովկասի հանդէպ կամ արձանագրում ռուսահայերի պարտութիւնները, «էշերի պէս կոտորվելը»՝ սակայն ընդմիշտ նոյն խաղը շարունակել անհնարին եղաւ։ Եւ երբ բուն իսկ կուսակցականների շարքերում սկսուեցին լսվել տրտունջի ձայներ կենտրոնական մարմինների բռնած ընթացքի դէմ՝ «Ձայն»-ը հրապարակ նետվեց «Դէպի Կովկաս» վերնագրով մի խմբագրականով։ Բայց պարզ էր, իր տատանվող դիրքը ամրապնդելու համար միայն նա դիմեց այդ քայլին. պարզ էր և այն, որ վերակազմեալ ղեկավարների յետագայ նմանօրինակ քայլերը ոչ թէ սթափվող խղճի մղումն էին, այլ կուսակցական քաղաքականութեան մի մանեովր, մի անախորժ անհրաժեշտութիւն [3]։

ԴԻՄՈՒՄ

(Կոչ Բեսսարաբիայի և Նոր-Նախիջևանի թեմի հայութեան)

Մեր թեմի վարիչների վարչական ակնյայտ անընդունակութիւնը և թեմիս հասարակական դպրոցական գործերի անմխիթար վիճակը ստիպում են մեզ ի նկատի ունենալով ազգիս հայրապետի վերջին ընտրողական կոնդակնը պահանջել վերոյիշեալ պաշտօնատար անձանց վերջնական հրաժարականը և նոր ընտրութիւններ նշանակել, որ թեմիս ժողովրդի անյետաձգելի պահանջն է։

Ժամանակ է, որ ժողովուրդն իր իրաւունքների տէրը լինի. նշանակովի պաշտօնեաները իրանց դերը կատարեցին։ Աշխատենք փոխարինել սրանց ընտրովի, ազգի կարիքները ճանաչող, բարեխիղճ պաշտօնեաներով։

Սթափվեցէք և ձեր ձայնը միացրէք այս կոչին, եթէ նախանձախնդիր էք թեմիս ազգային կուլտուրական հաստատութիւնների բարեկարգ վիճակին։

83 ստորագրութիւն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

Վերին-Ագուլիս, յունվարի 28-ին

Խնդրում եմ յանուն արդարութեան տեղ տալ սոյն երկտողիս «Մշակ»-ի էջերում։

Շաբաթ ու կէս առաջ «Մշակ»-ում հրատարակելու համար ուղարկեցի մի թղթակցութիւն, որով մի քանի պարոններ, «Ագուլիսի հայ հասարակութեան հսկիչ մարմին» անուան տակ, հանդէս էին գալիս իբրև նոյն հասարակութեան շահերի սրտացաւ պաշտպաններ և սպառնում «արդար և գաղտնի դատավճիռներով» պատժել իրանց դաւաճան ճանաչած մարդկանց։

Երէկ երեկոյ մութն ընկած պահուն յիշեալ «հսկիչ մարմնից» ստանում եմ մի սպառնական գրութիւն, որով անորակելի բառերով ու արտայայտութիւններով յայտարարում են ինձ «դաւաճան ժողովրդի սրտին մօտիկ գործերին ու շահերին» և պահանջում են «անյապաղ հեռանալ Ագուլիսից, միւս անգամ չերևալու պայմանով», եթէ չեմ ուզում «ծայրայեղութիւնների տեղիք տալ»։—«Ձեր բախտը կախված է ձեզնից,—գրում է «հսկիչ մարմինը» և սպառնում.—Ձեր արիւնը ձեր գլխին»։

Ու ժամանակ են տալիս ինձ մինչև փետր. 5-ը, որից յետոյ բախտս որոշված պիտի լինի «իմ արիւնը իմ գլխին լինելով»։

Ես ամբողջ գրութիւնը չեմ տալիս հրատարակութեան խնայելու համար ընթերցողի ականջը մի շարք գռեհիկ խօսքերից, որոնցով զարդարված է գրութեան կէսից աւելին։ Բայց և չեմ կարող առանց ուշադրութեան թողնել ինչ որ էական է։

Իմ կեանքին սպառնացող պարոններն իրանց գործելիք ոճրի ամբողջ ապօրինութիւնն ու տգեղութիւնը հասարակութեան աչքին օրինաւորութեան քողի տակ ծածկելու համար՝ գրում են ինձ, որ իբր թէ յանդգնել կամ յանդգնում եմ ես «տանձգութիւններ անել հասարակութեան միակ օգտակար հիմնարկութեան՝ դպրոցի դէմ»։

Լուրջ, բայց խիստ անհիմն մեղադրանք, որը նշանակութիւն կունենար այն դէպքում, եթէ փաստերով ի ցոյց դրվէին և իմ արած ոտնձգութիւններն ի վնաս դպրոցի։ Ճիշդ է այսքանը, որ նախ ես միշտ դատապարտել և էլի դատապարտում եմ դպրոցի հոգաբարձութեան անդամներից մի երկուսի գործած ապիկարութիւններն ու ցոյց տուած անտարբերութիւնը ինչպէս դպրոցի, այնպէս և հասարակութեան շահերի նկատմամբ, որով իբրև հայ անհատ կատարել եմ իմ պարտքը միայն (տես «Մշակ» № 227. «Ո՞ւմ փողն ում են տալիս»), երկրորդ որ երբէք չեմ համակրել ու չեմ էլ կարող համակրել նոյն դպրոցի ուսուցիչներից մի երկուսին, որոնց կատարած տխուր դերը մի խեղճ հասարակութեան մէջ այստեղ բոլորին է յայտնի, որով և ուսուցչական խմբի (բացառութեամբ մի երկու անդամների) ատելութիւնն ու հալածանքն եմ վայելում ամիսներից ի վեր։

Բայց ո՞վ ասաց, որ դպրոց ասելով պիտի հասկանանք ոմն հոգաբարձու Տէր-Մկրտչեան կամ ուսուցիչ Յ. Բ.։

Ա՜րդ, եթէ իմ կեանքի ինքնակոչ տէրերը չեն շահագործում «դպրոց», «կրթութիւն», «ժողովուրդ» և այլ այսպիսի հնչուն բառեր, թող հրապարակ դուրս գան և հասարակաց դատաստանի առաջ դատվին ինձ հետ և ոչ թէ վարագոյրի ետևից սուր շարժեն, որին ուրիշ անուն սազ կը գայ քան «ժողովրդի սրտակից շահերի պաշտպան» բառերը։

Իսկ թէ ինչ են այն պատճառները, որոնք նորահնար «հսկիչ մարմնին» դրդել են սպառնալիք կարդալ մի անզէն վարդապետի կեանքի դէմ, ես չեմ ասում, սպասելով որ հակառակորդներս իրանք քաջութիւն ունենան հրապարակի վրա գնալու. բայց նրանք իրանք էլ խոյս են տալիս դրանից, որովհետև դրանով տեղի կը տան մերկացնելու մի շարք «ծայրայեղութիւններ», որոնք վիճակվել են տեղիս դժբաղդ հասարակութեանը անցեալ յունիսից մինչև օրս «հսկիչ մարմնի» սրտացաւ անդամներին են քուէ տուել գործադրված խարդախութիւնների, բռնութիւնների և կաշառքների ազդեցութեան տակ, դարձեալ մենք չենք կարող թոյլ տալ, որ Դաշնակցութիւնը Թիֆլիսում 3000 անկեղծ համակրողներ ունենայ։

Եւ այն «բարոյական յաղթութիւնը», որ «Ժամանակի» անբարեխիղճ ստատիստները աշխատում են Դաշնակցութեանը վերագրել, միանգամայն կանխակալ և սխալ է։ Այդ «բարոյական» յաղթութիւնը վերաբերում է միմիայն հայկական այն սոսկալի շովինիզմին, որը հարիւրաւոր մարդկանց ստիպում էր, Դաշնակցութեանը ատելով հանդերձ, դարձեալ նրա թեկնածուներին քուէ տալ, մտածելով «աւելի լաւ է իմ բանկրոտ հայ դաշնակցականը ընտրվի, քան թէ մի վրացի»։

Այդ է եղել, ասում ենք, հազարաւոր քուէ տուողների հոգեբանութիւնը, այդ է եղել, հաւատացած ենք, և այն հայ «արմատականների» հոգեբանութիւնը, որոնք, իրանց քաղաքական հայեացքներով Դաշնակցութիւնից շատ հեռու լինելով հանդերձ, նրա հետ միասին էին գործում, կամենալով միևնոյն ժամանակ, երևի, անցեալ ընտրութիւնների ժամանակ կրած պարտութիւնից սևացած իրանց երեսները այս անգամ մի կերպ սպիտակացնել։

Վերոգրեալ նոյն հոգեբանութեամբ էին ղեկավարվում և հայ կադէտներից շատ շատերը, որոնց մէջ այս անգամ ոչ մի նախընտրողական գործունէութիւն և ագիտացիա տեղի չէր ունեցել, ուստի և նրանք կամ բոլորովին ձեռնպահ էին մնացել և կամ ճարահատեալ նորից իրանց ատած Դաշնակցութեանն էին քուէ տուել։

«Ժամանակի» պատասխանատուները ահա հէնց այստեղ պէտք է փնտռեն իրանց տարած (sic) «բարոյական» յաղթութեան շան գլուխը։

Բայց, ինչպէս երևում է, այդ միրաժն էլ շուտով, շատ շուտով կը վերանայ։ Ինչպէս արդէն խօսվում է, «վրացի շովինիստ» սօցիալ-դեմօկրատները պատրաստվում են մի վերջին և ամենաուժեղ հարուած հասցնելու «սօցիալիստ» Դաշնակցութեանը։ Պետական Դումայի պատգամաւոր, ասում են, Թիֆլիսի կողմից հայ պիտի ընտրվի։ Ի՞նչ լեզուով արդեօք պիտի խօսեն այդ ժամանակ զանազան Վաչէներն ու բթացած Սալաթները։ Օհ, ի հարկէ, նրանք էլի մէջքի վրա չեն ընկնի.

---

[1] Վերակազմեալները իրանց քաղաքական ծրագրի իրագործման համար ասպարէզ էին ընտրած Զէյթունը (քարտէզի վրա, բարեբաղդաբար), պայքար անկախ Հայաստանը Կիլիկիայի լեռներում միայն պարփակելու պայմանով։ Ախորժակի ծրագրիս չափաւորում, հայ յեղափոխական և այդպիսի համեստ պահանջներ...։

[2] Ամերիկահայերի Կովկասին տուած գումարը հազիւ 14,000 դոլլարի (մօտ 28,000 րուբլի)։ Հարկաւ, Կովկասի հսկայ պահանջները լրացնելու համար դա մի կաթիլ է ովկիանոսում, և իրաւունք ունէր վանեցի ուսանող Զիթչեանը ասելու կովկասանպաստ մի հաւաքումի ժամանակ իր առանձնախօսութեան մէջ թէ կովկասցի հայը նոյնիսկ իր թշուառութեան մէջ կարող էր թքել ամերիկահայի իրան իբրև ողորմութիւն տուած գումարների վրա, ինքը դարձեալ պատրաստ ուրիշին ողորմութիւն տալու։ Սակայն ամերիկեան հանգանակութիւնները դրամ շորթելու նպատակ չը պէտք է կրէին, որովհետև նրանց միջոցով ազգային համերաշխութեան հիմնաքարը պիտի դրվէր, վաղուց խախտված սև, ցանեցնող ձեռքերով։

[3] Դատապարտելի էր և հին-հնչակեանների երկդիմութիւնը կովկասանպաստ հանգանակութիւնների ժամանակ։ Մի տեղ նրանք հրաժարվեցին մասնակցելու դաշնակցական տիրացուների հետ չուզենալով որևէ գործ ունենալ, մի այլ տեղ նոյն կերպով վարվեցին վերակազմեալներին գործակցելուց խուսափելով։ Կարծես դրամները դաշնակցական կամ վերակազմեալ անսկզբունքները լցնելու համար հաւաքվելու լինէին։ Տխմարի լօգիկա և բթամիտ կուսակցամոլութիւն, որի օրինակը տուին «Երիտասարդ Հայաստանի» շուրջը բոլորած հանգստ հնչակեանները, այստեղ, Նիւ-Եօրքում։ Տեղական հին-հնչակեաններից և ոչ մէկը նոյնիսկ մի սենթ չուզեց նուիրել Կովկասի աղէտեալներին, մինչդեռ ուրիշ տեղերինը՝ ազատ լինելով չեֆերի ճնշումից՝ ինքնաբերաբար մասնակցեցին գոնէ չափաւոր նուիրատուութիւններով։

դրա մէջ կասկած չը կայ։ Բայց վստահաբար կարելի է ասել, որ «անխմբված» այդ «շովինիստ» սօց.-դեմօկրատների այդպիսի խկական սօցիալ-դեմօկրատական վարմունքը միանգամայն կը կարկամեցնի հազարաւոր շօվինիստ հայերի լեզուները և նրանց ընդմիշտ կը խզի դեմագօգ ու պոռոտախօս Դաշնակցութիւնից։

Այ, չափազանց հետաքրքիր կը լինի, եթէ դաշնակցական Վահէնները այդ ժամանակ ստատիստիկա կազմեն ու հաշւեն, թէ քանի հատ համակրողներ ունի Դաշնակցութիւնը ոչ միայն Թիֆլիսում, այլ և բոլոր հայկական գաւառներում…

Խ.-Ազատ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղէտեալների օգտին ստացանք 1. Աշտարակի խնայողական ընկերութեան վարչութիւնից 200 ր., 2. Եկատերինօդարից—Արսէն քահանայ Վարդանեանի միջոցով 25 ր., որպիսի գումարը պարսկահպատակ մահմեդականները ուղարկել են հայ քահանաներին իբրև ժամոց Մուզաֆֆէր-էդդին Շահի հոգեհանգիստ կատարելու համար։

—

«Մշակի» № 24-ի Ներքին լուրերում յայտնուած էր, որ ոմն Կարապետ Տարախչեան ինքն իրան վիրաւորել է իբր կեանքից ձանձրանալով. բայց այժմ մեզ տեղեկացնում են, որ վերոյիշեալ անձնաւորութիւնը Գարեգին Տարախչեանն է, որին ուրիշներն են վիրաւորել ու անյայտացել։

—

Անասնաբուժական բժիշկ Վ. Վարդանեանը դիմել է 3-րդ հաշտարար բաժնի քննիչին հետևեալ յայտարարութեամբ. «Որովհետև բժիշկ Ա. Մ. Օհանջանեանը իմ «Քրիստափոր Միքայէլեանը և Դաշնակցութիւնը» յօդուածի համար դատաստանական պատասխանատւութեան է հրաւիրում «Кавказская Рѣчь» լրագրի խմբագիր պ. Զաքարին, ուստի առաջարկում եմ նոյն պատասխանատւութեան ենթարկել և ինձ, այդ յօդուածների հեղինակիս, որոնց մէջ ի միջի այլոց շօշափւում է և բժ. Օհանջանեանի անձնաւորութիւնը»։

—

Նոյն պ. Վարդանեանը քաղաքային վարչութեանը ներկայացրել է հետևեալ պատճառաբանեալ յայտագիրը. «Թիֆլիսի քաղաքային վարչութեան այն հարցին, թէ ինչու ես խնդրեցի ինձանից վերցնել մանրադիտական կայարանի համար պատասխանատւութիւնը, պատիւ ունիմ պատասխանել հետևեալը. «Կայարանում սահմանվեց իրերի վերին աստիճանի աննորմալ կարգ ու կանոն. ծառայողները բաժանվեցին մի քանի խմբերի անձնական շահախնդիր հողի վրա և կայարանը դարձրին անձնական շահեր մաքրելու ասպարէզ։ Այդ հողի վրա արտաքսվեց իր արհեստի մէջ հմուտ և աշխատասէր հին ծառայող և յարգարժան տիկին Պաքալիձէն։ Հէնց նոյն հողի վրա տեղի ունեցան մի շարք ուղղակի անվայել դէպքեր։ Ես դեռ շատ առաջ առաջարկեցի բժիշկներին անցեալ տարիների նման իրանցից մէկին յանձնել կայարանի կառավարութեան պարտականութիւնը։ Այն ծախսով, որ գործադրվում է քաղաքի կայարանի ծառայողների վրա ներկայումս, կարելի է գեղեցիկ կերպով կազմակերպել միանգամայն ինտելլիգենտ կազմ ուսանողներից և բժիշկներից, մի կազմ, որը կարողանայ գիտակցել այն խոշոր պատասխանատւութիւնը, որպիսին դրված է մանրադիտական կայարանի վրա, այն ինչ դեկտեմբերի 26-ի և այլ ուրիշ շատ փաստեր ապացուցանում են, որ ծառայողների նախկին կազմը բաղկանում էր այնքան էլ ոչ ինտելլիգենտ անձերից»։

—

Երէկ, փետրվարի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին, Վերայի դաւիվայրում երեք անյայտ չարագործներ կրակում են «Բերլին» հիւրանոցատէր Անդրէյ Խունդարի վրա, գլխից։ Վիրաւորվածին տանում են Միքայէլեան հիւանդանոցը։

—

Փետրվարի 1-ին Սօլդատսկի կոչվող շուկայում, ցերեկվայ ժամը 3-ի մօտերը, ատրճանակի մէկ հարուածով սպանվում է ձու վաճառող Բագրատ Ջաղէեվը։

—

Քաղաքի ծայրում, Սեաա-Ակվարում կոչված տեղում գտնվել է Թիֆլիս քաղաքացի Պեօտր Վիւօչկինի դիակը։ Կասկածով բռնված է Բէլի-Կլիւչի բնակիչ Ալէքսանդր Գրօզցկօվը։

—

Փետրվարի 6-ի երեկոյեան ժամը $7^1/_2$-ին իգական I գիմնազիայի դահլիճում ծնողական ժողովների կենտրոնական խորհրդի նախագահը ժողով է գումարելու։ Ժողովի ծրագիրն է. 1) նախագահի, քարտուղարի և նրանց անձնափոխանորդների և գանձապահի ընտրութիւնը, 2) ծնողական խորհուրդների կենտրոնական խորհրդի գործունէութեան—խորհրդի հաստատած հրահանգագրի լրացուցիչ նախագծի քննութիւնը, 3) ծնողական խորհուրդներին վերաբերվող § 24 որոշման լրացուցիչ նախագծի քննութիւնը, 4) ծնողական խորհրդի ընտրած յատուկ մասնաժողովի կազմած միջնորդութեան քննութիւնը—Կովկասի Փոխարքայի առաջ, որ թոյլատրվի, որ Թիֆլիսի միջնակարգ դպրոցների սաները ժողովներ գումարեն դասարաններում։

—

Ստացանք Լ. Պետրօվի «Երկու ծրագիր», Թարգ. Գար. Պապովեան, 83 երես, գինն է 20 կոպէկ։

—

«Русское общество и торговля»-ի պահեստատեղիի կառավարիչ Իոսիֆ Շիշլօվսկին, որը բնակվում է Ածալեան փողոցում, յայտնել է 9-րդ քաղաքամասի պրիստաւին, որ լոյս փետրվարի 1-ի գիշերը Ածալեան փողոցի կողմը գտնվող պատուհանից պահեստատեղին են մտել անյայտ չարագործներ և գողացել են մէկ հակ բրդէ ապրանք 700 րուբլի արժողութեամբ, իսկ միւս հակը բացել են։ Չարագործները կարողացել են փախչել։

—

Փետրվարի 2-ին Թիֆլիսի ժողովարանի աւագ Ց. Ա. Սուլխանովը ներկայացրել է կոմսուհի Վարվարա Դաւիդօվնա Վօրօնցօվա-Դաշկօվայի մէկ հազար րուբլի, որը յունվարի 15-ին կայացած ընդհանուր ժողովում յատկացրվել էր զանգեզուրցիների օգտին առանց կրօնի խտրութեան։

—

Բագւում ցրված է հայերէն լեզուով հետևեալ թռուցիկը. «Մենք բոլորս, գործազուրկ հայ բանւորներս, որ զրկված ենք ամեն հնարաւորութիւնից շարունակելու մեր գոյութիւնը, թափառում ենք այս ու այն կողմը որևէ աշխատանք փնտռելով։ Մեր յոյսը, աշխատանք գտնել պրօմիսլաներում, խորտակվեց հայկական ֆիրմաներում յայտարարված գործադուլներով։ Մենք բոլոր գործազուրկներս դիմում ենք մեր բոլոր ընկեր բանւորներին՝ լուրջ կերպով մտածել իրանց այն տնանկ ընկերների մասին, որոնք ներկայումս ուղղակի քաղցած են, և մշակել այնպիսի միջոցներ, որպէս զի հայկական ֆիրմաները մեզ պաշտօններ տային իրանց ֆիրմաներում։ Մեր հայրենիքում սովի ճանկերում թողնելով մեր կանանց, մայրերին և քոյրերին, մենք այստեղ մնում ենք նոյնպէս քաղցած։ Սրանով դիմում ենք այն ֆիրմաների բանւորների ներկայացուցիչներին, ուր ներկայումս գործադուլներ են յայտարարված, և խնդրում ենք նրանց գալ ժողովի, որ նշանակված է Բալախանսկի փողոցում Ղուկասօվի տանը հինգշաբթի օրը, իսկ կիրակի բոլոր բանւորների ընդհանուր ժողովին, որ նշանակված է Բագուի մարդասիրական ընկերութեան տան մէջ։ Հայ գործազուրկ բանւորների դաշնակցութիւն»։

—

Բագուի քաղաքապետի հրամանով օպերային խմբի ռեպերտուարից հանված է «Руки вверхъ» պիէսան։

—

Բագւում «Կասպիական մեքենագործական գավօդում» գործադուլը շարունակվում է։ Յունվարի 30-ին բանւորները ժողով են գումարել, ուր վճռել են ընդունել մի այնպիսի եզրափակութիւն, որ դրականապէս յայտարարում է, թէ բանւորները գործադուլը տանելու են մինչև վերջը։ Բացի դրանից գործթողները վճռել են դիմել իրանց գործազուրկ ընկերներին, առաջարկելով ոչ մի դէպքում չը գրաւել նրանց տեղերը։

—

Ինչպէս հաղորդում են «Баку» լրագրին, պրօմիսլաներում և գավօդներում կայացած մի շարք բանւորական ժողովներում քննվել է բանւորական մի մեծ լրագիր հրատարակելու հարցը։ Այդ գաղափարին բանւորները վերին աստիճանի հետաքրքրութեամբ են վերաբերվում, և մօտիկ ապագայում լրագիր հրատարակելու հարցը սկզբունքով արդէն վճռված է, այն պայմանով սակայն, որ լրագիրը նուիրված է լինելու գլխաւորապէս գործարանային և պրօմիսլային բանւորների կարիքներին և պէտք է հրատարակվի և տարվի բացառապէս իրանց բանւորների ձեռքով։ Վերջին վճիռը ընդունված է ի նկատի առնելով այն երկիւղը, որ եթէ լրագիրը տրվի ինտելլիգենտների ձեռքը, այն դէպքում վերստին կը սկսի կուսակցական ֆրակցիօնական անվերջ պօլեմիկան ի վնաս հէնց իրանց բանւորների շահերի։ (?)։

—

Քաղաքապետին կից կազմված խորհրդի որոշմամբ նախագծվում է փակել 152 խմիչքեղէնների խանութներ, կաթնատներ, թէյարաններ և այլն։ Քաղաքային վարչութիւնը պահանջել է ոստիկանութիւնից այդ հաստատութիւնների բոլոր տէրերի յականէ-անուանէ ցուցակը։

—

«Баку» լրագրում կարդում ենք. «Համաձայն մեր ստացած արժանահաւատ տեղեկութիւնների, 1906 թւականի ընթացքում ընդամենը յարքոնիս է գրաւված Բագու հասած և քաղաքից մեկնող նաւերում ռազմամթերքների հետևեալ քանակը. երեքգծանի հրացաններ—13 հատ, բերդաններ—77, որսորդական հրացաններ—21, այլ տեսակների հրացաններ—2. 53 ատրճանակ, 35 դաշոյն, 3 գծանի հրացանի փամփուշտներ—2,955 հատ, բերդանի փամփուշտ—4,946, ատրճանակի փամփուշտ—10,292, փամփուշտների գիլզաներ—6001, թնդանօթի կապսուլներ—5,800, վառօդ 1 պուդ 1 ֆունտ, ուժանակ—$37^1/_2$ ֆունտ, և այլն։ Բոլոր այդ զէնքը և ռազմամթերքները, որ նաւահանգստային ոստիկանութիւնը գրաւել է եկած նաւերը և ապրանքները խուզարկելու ժամանակ, յանձնված է ոստիկանական վարչութեան»։

—

Համաձայն Բագուի քաղաքապետի կարգադրութեան, Բագուի բոլոր տպարաններում, ի բաց չառնելով նաև նահանգականը, զինւորներ են նշանակված։ Այդ միջոցը ձեռք է առնված նրա համար, որպէսզի արգելվի կոչեր և այլ բաներ տպագրելու համար տպարանները բռնութեամբ յափշտակելուց։ Զինւորների ծախքերը հոգալու են տպարանատէրերը, և իւրաքանչիւր զինւորին տրվելու է 25 կոպէկ օրական։

—

Ալէքսանդրօպօլի կայարանից հաղորդում են, որ յունվարի 31-ին գնացքի (№ 5) ժամանելուց յետոյ 561-րդ վերստի վրա գտել են մի անյայտ թուրքի դիակ, կէս այրված։ Արիւնի հետքերը տանում են երկաթուղու գծից առանձին կողմը։

—

Մոսկվայի ադմինիստրացիան հնարաւոր համարեց վերացնել այն կարգադրութիւնը, որի համաձայն Մոսկվայում դադարեցված «Новь» լրագրի խմբագիր երդ. հաւատարմատար Ի. Ի. Ռադիօնովը աքսորվելու էր Մոսկվայից։

—

Օդեսայում, մէկ շաբաթվայ ընթացքում, սկսած յունվարի 14-ից մինչև 21-ը, սպիտակ գվարդիացիները ջարդել, ծեծել և դանակով վիրաւորել են մօտ 150 հրէաների և ուսանողների։ Այս անգամ սպիտակ գվարդիացիները ամեն օր կողոպտում են խանութները, տանջում են խանութպաններին և նրանց զաւակներին։ Նախընտրական անպատիժ այդ գազանութիւններով յառաջացած սարսափը և երկիւղը աննկարագրելի են։ Վաղը դաշնակիցները տօնելու են Դուբրօվինի ուղարկած զինանշանի օծման հանդէսը։ Հանդէսին հրաւիրված են բոլոր միապետական կազմակերպութիւնների անդամները։ Քաղաքը մահապարտի անհանգիստ դրութեան մէջ է, սպասելով հանդէսի արիւնոտ ֆինալին։ Հրէայ պատգամաւորութիւնը ներկայացաւ քաղաքապետին, պարզեց նրան վերջին շաբաթվայ ամբողջ սարսափը և պաշտպանութիւն խնդրեց»։ («Р.»)

—

Մոսկվայի գեներալ նահանգապետը միջնորդութիւն է յարուցել արդարադատութեան մինիստրի առաջ, որպէսզի դատաստանական պալատից դուրս հանվեն բոլոր քաղաքական գործերը և յանձնվեն զինւորական նահանգական դատարանին։ «Утро» լրագիրը լսել է, որ գեներալ-նահանգապետի այդ խնդիրը յարգված է արդէն և զինւորական-նահանգական դատարանին կից մտադրութիւն կայ հիմնել մի նոր բաժանմունք, որը քննէր բացառապէս քաղաքական գործերը։

—

«Утро» լրագրի ասելով, Մոսկվայի միապետականների մի մասը կամենում է տալ իրանց քուէն սօցիալ-դեմօկրատներին։ Այդ որոշումը բացատրվում է տաքտիկական դիտումներով։ Միապետականները կարծում են, որ Դուման եթէ յեղափոխականներից կազմված լինի, անպատճառ կը ցրեն։

—

Օդեսայում, քաղաքապետին ներկայացել է բօրսայի կօմիտէտի և տանտէրերի ընկերութեան պատգամաւորութիւնը։ Պատգամաւորները պարզ գոյնով քաղաքապետին նկարագրել են Օդեսայի ազգաբնակութեան անցրած ժամանակի ծանր և դժնդակ պատկերը, սև հարիւրեակների ձեռքով հանապազօր ծեծվող խաղաղ քաղաքացիների ահը և յուսահատական վիճակը. ապա նրանք բացատրել են, որ վերջին դէպքերը ուժեղ կերպով ազդել են բօրսայի վրա, բաւականաչափ իջեցրել են անշարժ կալքերի գները, կրճատել են առևտուրը։ Պանիկան քաղաքում աճում է. ազգաբնակութիւնը խուսափում է փողոց դուրս ենել։ Ազգաբնակութեան լաւագոյն մասի մէջ ժողովրդականութիւն վայելող քաղաքապետ Գրիգօրիէվը նկատել է, որ նա ինքը շտապեց վերադառնալ Պետերբուրգից ի նկատի առնելով այն խայտառակութիւնները, որպիսիները տեղի են ունենում վերջին օրերս Օդեսայում։ Հանգստացնելով պատգամաւորութեան, որ պատուիրակների ընտրութեան օրը կանցնէ միանգամայն խաղաղ և հանգիստ, քաղաքապետն ասել է, որ նա կոչ կը հրատարակէ և անձամբ կայցելէ ընտրողական թաղամասերը՝ Պատգամաւորութեան ներկայութեամբ քաղաքապետը հրամայել է ոստիկանապետին ձեռք առնել ամենաեռանդուն և ամենակտրուկ միջոցներ ծեծը և ջարդը վերջացնելու համար։ («Р. С.»)

—

Փետրվարի 1-ի երեկոյեան զինված յարձակում են գործել շամպանիայի «Экцельсіоръ» գործարանի վրա։ Կողոպտիչները գողացել են դրամարկղից 75 ր. և անյայտացել են։ («Հ. Գ.»)

—

Ռուսաց հոգևոր կառավարութեան կարգադրութեամբ, ապահարզանի վերաբերեալ գործերով զբաղվել այսուհետև այլևս չէ թոյլատրվելու այն անձանց, որոնք չեն պատկանում երդուեալ-հաւատարմատարների կորպորացիային. ոչ միայն ինքնակոչ փաստաբանները, այլ և նոյնիսկ երդուեալ-հաւատարմատարների օգնականները զրկվում են ապահարզանի գործեր վարելու իրաւունքից և չեն կարող տեղեկութիւններ անգամ հաւաքել նրանց մասին։ Միևնոյն ժամանակ ադմինիստրացիան խիստ ցենզուրա է նշանակել ապահարզանի գործեր վարելու համար յայտարարութիւններ տպագրելու մասին, որոնց տպագրելու թոյլատւութիւնը չէ տրվում առանց համապատասխան հաստատութիւնից համաձայնութիւն ներկայացնելու։

—

Լօձի բանւորները, ինչպէս յայտնի է, պատգամաւոր էին ուղարկել Բերլին համաձայնութիւն կայացնելու լօկաուտ յայտարարողների և բանւորների միջև։ Պատգամաւորութիւնը յայտնել է, որ բանւորները պատրաստ են ստորագրելու գործարանատէրերի պահանջները, եթէ որ վերջինները հրաժարվելու լինեն իրանց կայացրած որոշումից արձակելու 98 բանւորներին, որպիսի միջոցով նպատակ ունեն գործարանատէրերը «վախեցնելու միւսներին»։ Գործարանատէրերը մերժեցին։ Պատգամաւորութիւնը դիմել է «Berlin, Tagebl.» լրագրի խմբագրին, խնդրելով միջնորդ հանդիսանալ վիճող կողմերի մէջ։ («Рѣчь»)

—

Ռուսաց սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութիւնը յայտնում է, որ «Ընտրութիւնները Պետերբուրգում և 31 հոգու կեղծաւորութիւնը» բրօշիւրը, որի տակ ստորագրել է Ն. Լենինը, իր մէջ պարունակում է ուղղակի մեղադրանք Պետերբուրգի կազմակերպութեան 31 անդամների դէմ այն բանի համար, որ նրանք բանակցութեան մէջ են մտել սահմանադիր-ռամկավար կուսակցութեան հետ «վաճառելու իրանց ձայները կադետներին» և որ փոքրամասնականները առևտուր արեցին կադետների հետ «որպէսզի իրանց մարդուն Դումա ուղարկեն»։ Կենտրոնական կօմիտէտը յայտնում է, որ մի այդպիսի մեղադրանք մամուլի էջերում, մանաւանդ ընտրութիւնների նախօրեակում, խռովութիւն պէտք է առաջացնէ պրօլետարիատի շարքերում, կասկածի ենթարկելով կուսակցութեան անդամների քաղաքական ազնւութիւնը և որ այդպիսի միջոցները կարող են գործադրվել սօցիալ-դեմօկրատիայի դէմ կռւելու համար միայն։ Այդ պատճառով կենտրոնական կօմիտէտը Ն. Լենինի այդ վարմունքը առաջարկել է ընկերական դատարանի քննութեան։ (»Рѣчь»)

—

Ծովային գլխաւոր շտաբը, ծովային մինիստրի հրամանի համաձայն, յայտարարել է, որ ծովային վարչութեան շտաբ և օբեր-օֆիցերները կայսերական թատրօններում ներկայացումների ընդմիջումների ժամանակ չը պէտք է նստեն։ («О. Б.»)

—

«Рус. Слово» լրագրին Լօնդօնից հեռագրում են, որ Լօնդօնի լրագրների Պետերբուրգի թղթակիցների հաղորդած տեղեկութիւններից երևում է, որ Պետերբուրգի կառավարչական շրջաններում չեն կասկածում, որ երկրորդ Դումայի մեծամասնութիւնը կը լինի անպայման օպպօզիցիօն։

—

Պետերբուրգի քաղաքային Դումայի ձայնաւոր Գ. Ա. Ֆալբօրկը իբրև Պետական Դումայի ընտրող պահանջել է քաղաքային վարչութիւնից 15,500 հատ ընտրողական թերթիկներ այն հիման վրա, որ ներկայ դէպքում օրէնքը չէ արգելում ընտրողական բիլլէտներ ստանալը. միայն դեկտեմբերի 10-ի հրահանգն է, որ արգելում է իւրաքանչիւր ընտրողին չորս օրինակից աւելի տալ։ Քաղաքային վարչութիւնը Ֆալբօրկի այդ առաջարկութիւնը քննելով, ներքին գործերի մինիստրի հրահանգի համաձայն, մերժել է նրան տալ պահանջված բիլլէտները։ Լուրերին նայելով այդ սկզբունքային հարցը յանձնվում է աւելի բարձր ատեանի—սենատի հայեցողութեանը։ («Телегр.»)

—

Պետերբուրգի «Կրեստայի» բանտում, «Сегодня» լրագրի ասելով, ներկայումս բանտարկված է յայտնի լրտես Վասիլի Գրիգօրենկօ։ Օդեսայի ոստիկանական բաժանմունքում ծառայելիս, նա, միևնոյն ժամանակ, անդամ էր սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան և մատնեց յեղափոխական կօմիտէտի գործիչներից մի քանիսին, ապա անցաւ յեղափոխականների կողմը և վերջիններիս յանձնեց ոստիկանութեան դիտաւորութիւնների ծրագիրները։ Ի միջի այլոց նա մեղադրվում է ոստիկանութեանը դիմադրութիւն ցոյց տալու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 փետրվարի

ԻՎԱՆՈՎՕ-ՎՈԶՆԵՍԵՆՍԿ, 1 փետրվարի։ Մեքենագործական գավօդների գործադուլը վերջացաւ։ Բաւարարութիւն է տրված բանւորների երկու պահանջներին, որով ռոճիկները աւելացված են 5%-ով և տօն օրերից առաջ աշխատանքները վերջանալու են ցերեկվայ ժամը 2-ին։

ՕԴԵՍԱ, 2 փետրվարի։ Պետական Խորհրդի պատուիրակներ են ընտրվել Նովօրօսիյսկի համալսարանի կողմից Մեդվեդեվ, Մէլիքօվ և Իվանով առաջադիմական պրօֆեսօրները։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 2 փետրվարի։ Տպարանատէրերը վճռեցին լօկաուտ յայտարարել։

ՌԵՆՆ, 2 փետրվարի։ Սանմէէնում, սեմինարիայի քաղաքացիական պաշտօնեաների ընդունելու ժամանակ տեղի ունեցան սոսկալի տեսարաններ։ Անմիջապէս կանչվեցին զօրքեր, որոնք մաքրեցին շինութիւնը ժողոված խուռն բազմութիւնից։ Պատնէշացրած դռները հարկ եղաւ տեղահան անել։ Ուսուցիչներին դուրս տարան ույժով։ Ձերբակալվեցին մի քանի հոգի, որոնց թւում են և տեղական պաշտօնեաները։

ԼՕՆԴՕՆ, 2 փետրվարի։ Մտադրութիւն կայ Բերէնսֆօրդի Լամանշի նաւախումբը ուժեղացնել նոր նաւերով, այնպէս որ հաւասարվի Վիլսօնի հրամանատարութեամբ գործող նաւախմբին։ Ծովակալութեան պաշտպանողական նաւախումբը որոշեալ ժամանակամիջոցներում կը միանայ Լամանշի էսկադրայի հետ՝ Բերէնսֆօրդի հրամանատարութեամբ մանեօվրներ կատարելու համար։

ԲԻԶԵՐՏԱ, 2 փետրվարի։ «Ցէսարէվիչ» զրահանաւը և «Բօգատիր» ականանաւը մեկնեցին Տուլօն։

ԲՕԼՕՆԻԱ, 2 փետրվարի։ Լուրջ կերպով հիւանդացաւ յայտնի բանաստեղծ Կարդուչչին։

3 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի։ Ծովային մինիստրի օգնական փոխ-ծովապետ Բօստրէմը փետրվարի 1-ին ստանձնեց իր պաշտօնը։

ՎԱՐՇԱՒԱ, 2 փետրվարի։ Պատերազմադաշտային դատարանը մահվան է դատապարտել երեք հոգու, զինված յարձակում գործելու համար։

ԲՐԻԱՆՍԿ, 2 փետրվարի։ Սպանութիւնները և կողոպուտները վերսկսվեցին։ Բռնվածների մեծ մասը գործազուրկներիցն է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 փետրվարի։ Զանազան տեղերից հաղորդում են, որ իրականացվում է տօնական հանգիստը։ Բոլոր առևտրական հաստատութիւնները փակված են։

ԼՕՆԴՕՆ, 2 փետրվարի։ Դիկկինսօնը համայնքների պալատ մտցրեց կանանց ընտրողական իրաւունք տալու օրինագիծը։

ՊԵՐՄ, 2 փետրվարի։ Ռումբ նետվեց թնդանօթներ պատրաստելու գործարանի կառավարչի բնակարանը։ Շինութեան մի մասը քանդվեց։ Մարդկային զոհեր չը կան։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վերքաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԷԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Կ. Ի. ԳԶԷԼԻԵՎ—$6^1/_2$—$7^1/_2$ ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Գասկէվիչի փողոցների, № 33/15։
(ա. օ.) 100—100

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
62—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱՒՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։
Կուկիա, Սեմեոնովսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 19—20

ԲՈՒՆԱԿՈԹ ԳԻՒՂԻ
ՍԻՍԵԱՆԻ
Գրադարան-Ընթերցարանի
օգտին խնդրում ենք օտարութեան մէջ գտնվող Սիսեանի բոլոր բարեկամներին և հայ հասարակութեան զգայուն, լաւագոյն տարրերին չը զլանալ իրանց նուէրները ուղարկելու հետևեալ հասցէով Герюсъ Вартанъ бегу Теръ-Оганезову, ուղարկել Բնակոթ Ամիրջան Մինասեանցին։ 1—3

Մի ՀԱՅ
ԵՐԻՏԱՍԱՐԴ
քաղաքային ուսումնարանը աւարտած, ցանկանում է մի որևէ
ՊԱՇՏՕՆ
Հասցէն՝ Баку, 2-е почтовое отдѣленіе, чиновнику Ванціянцу
(ու. կ. չ.) 5—6

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. չ.) 21—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 101—150

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ“
№ 5
Իշխան Սաբահեդդինի պատկերով
և հետևեալ բովանդակութեամբ.

Նոր փառքի առաջ	Տ. Զաւէն
Օսմանեան Սահմանադրութիւնը	
Ապակեդրոնացման սիստեմը և քրիստոնեայ ու մահմեդական ազգաբնակ.	Սաբահեդդին
Թիւրք բանաստեղծութիւն	Սիւլէյման Նազիֆ
Արևելեան հարցի կրած էվօլիւցիան Բերլինի կոնգրեսից ի վեր (1875-1906)	Ռ. Պինոն
Աբդիւլ Համիդի ներքին կեանքը	Սեֆեր բէյ
Հայաստանի կացութիւնը 1881-էն առաջ	Ռօլէն Ժակմէն
Գծեր օսմանեան նորագոյն պատմութիւնից և Աբդիւլ-Համիդը	Ա. Գիւրջեան
Մամուլի շուրջը	
Վանի առաջնորդութիւնը	
Հայ կեանքին շուրջը	
Թղթակցութիւններ	
I Նամակ Վանից	Վանեցի
Կուլտուրական ձեռնարկներ	
Լուրեր	
Յայտարարութիւններ	

ԱՆՑԵԱԼ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ
Բագւում օր ցերեկով անյայտ չարագործի ձեռքով սպանվեց իմ միակ որդի
Սարգիս Քալաշեանցը
(Ա Հ Ր Ի Մ Ա Ն)

Որի անձնաւորութիւնը շատ լաւ յայտնի է այնտեղի հասարակութեանը։

Անմխիթար այրիս, զրկվելով ծերութեան միակ նեցուկից՝ մնացել եմ միանգամայն անօգնական դրութեան մէջ՝ ծանրաբեռնված ընտանիքով։

ՉՈՒՆԵՆԱԼՈՎ հոգեկան ոչ մի մխիթարանք, մայրական միակ փափագս է տեղափոխել նահատակ որդուս մարմինը Ալէքսանդրօպօլ, որի համար պաշտօնական իշխանութեան թոյլտւութիւնը ստացվել է, բայց որովհետև ես իմ սեփական միջոցներով ոչ մի հնարաւորութիւն չունիմ ծածկելու պահանջված ծախքերը, դրա համար դիմելով բարեգործ հասարակութեանը, աղերսում եմ չը զլանալ օգնել ինձ իրանց միջոցներից, որով և հնարաւորութիւն կը տան վշտացած այրուս գոնէպէս մխիթարվելու։

Փողերը խնդրում եմ ուղարկել կամ «Մշակի» խմբագրութեան անունով, կամ ինձ, հետևեալ հասցէով՝ Александрополь фотографу Акопу Пиперянцу—յանձնել այրի Մարգարիտ Քալաշեանցին։

Այրի Մարգարիտ Քալաշեանց
2—2

Մի ինտելլիգենտ **հայուհի** ցանկանում է մտնել հայ ընտանիք—երեխաների մօտ ոչ փոքր հինգ տարեկանից, համաձայն է գնալ և ուրիշ քաղաք. Ցանկացողները թէ՛ նամակով և թէ անձամբ կարող են դիմել Վօզնեսենսկայա փողոց, տուն № 18. վերին յարկ, առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը։
(հ. ե. կ.) 5—5

Մի երիտասարդ,
որ աւարտել է հաշւապահութիւն, որոնում է համապատասխան պաշտօն՝ գրասենեակներում, առևտրական տներում, գիտէ նաև ռեմինգտոնի վրա տպել։ Ցանկացողները թող բարեհաճեն դիմել. Грибаѣдовская № 5, Բր. Տէր-Յովհաննէսեանց։
2—3

ԾԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ՀՆԱՐԵԼ Է
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
ՖԻՐՄԱՆ
ԻՐ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ Է
GRAND PRIX
Բարձրագոյն ընծայ. Պարիզ 1900 թ.

ԿՈՉ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Թիֆլիսի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան Վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն յարգելի հայ հասարակութեան, որ փետրվար—մարտ ամիսների ընթացքում բանալու է Թիֆլիսում Որբանոց։

Ուստի խոնարհաբար խնդրում է ամէն մի հայի, իր ույժերի համեմատ նպաստել, ով ինչով կարող է, թէ տան կահկարասիքով, (օր. մահճակալ, պահարան և այլն) թէ խոհանոցի ամանեղէններով և թէ հագուստեղէնի կտորներով, որով որոշ չափով կը դիւրացնեն և կը թեթևացնեն որբանոցի սկզբնական անհրաժեշտ ծախսերը։ Վարչութիւնս շնորհակալութեամբ կընդունէ իւրաքանչիւր հայի նպաստը։

Նուէրներ ընդունվում են ամեն օր առ. ժ. 10—12 ը հետևեալ հասցէով. Միխայլովսկի պր. տ. № 65. Փօտօգրաֆիա Այվազեանի, տիկին Այվազեանին և Պասկևիչ փ. տ. № 13, տիկին Ալամանեանցին։ Նուէրները բերողը կը ստանայ ստացական. բացի այդ՝ լրագրներումն էլ առանձին հաշիւ կը տրուի։ 8—8

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES»

12/25-ին փետրվարի, մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, առաջնակարգ «Danube» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քալամաթա, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանհայ (Չինաստանում), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակօրեանին, նախկին Արծրունու գալէրէյում, թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатная Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская, ул. № 5